



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԾԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 9, 1899

ԹԻԻ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղբթ	73
Զօրանալ	73
Հարցումներու Պատասխաններ	73
Նոր ֆրիստոնեական Աւետ. Բողոքականաց	74
Փանամայի Նոր Զրանցքը	75
Երևակայութիւնն Ախտերու Բուժման Մէջ	76
Խուզարկութիւններ Իսլամիոյ Մէջ	76
Մ. Լուպէ, Գաղղիոյ Նորընտիր Նախագահը	76
Անկիթքան Ծիսականութեան Առթիւ	77
Վանայ Ամերիկեան Որբանոցը	77
Հանդէս Քաղաքական	79
Գրամական	80

ԶՕՐԱՆԱԼ

Նորադարձի մը կեանքին առաջին ամիսները վտանգաւոր են: Այդ ամիսներու իր ընթացքով կ'որոշուի մեծ մասամբ անոր ապագայ փորձառութիւնը: Իր սիրտը վառ է սիրով, բայց նաև լեցուն է հարցումներով: Գիտէ իր անարժանութիւնը և կը մտածէ թէ արդեօք կարող պիտի ըլլայ ներկայացնել Փրկիչը: Ինչպէս կրնայ զգուշանալ ինչպէս և իր նոր ու սքանչելի Բարեկամն անպատուելէ: Ինչպէս կրնայ իր հզօր Տէրօջը հզօր մէկ աշակերտն ըլլալ:

Յիզիքական կեանքը մէկ պատասխան կու տայ: Զօրութիւնը կու գայ գործածութեամբ: Կը զօրանանք՝ գործածելով այն զօրութիւնը զոր ունինք: Նոյնպէս երիտասարդ քրիստոնեան պիտի տեսնէ թէ իր հոգևոր զօրութիւնը կ'աւելնայ միշտ այն համեմատութեամբ որով կը գործածէ զայն: Երբ կը կատարենք քրիստոնէավայել բաները զորոնք դիտենք, այն ատեն կը սորվինք թէ ինչպէս պիտի ընենք աւելի ազնիւ բաներ:

Պետրոսի փորձութեան նման, նորադարձին գլխաւոր վտանգն է թերեւս վարդապետն ուրանալ անակնկալ տկարութեան վայրկեանի մը մէջ: Ինչպէս ոյժ ստանալու է որ հաւատարիմ վկայ մը ըլլայ: Լոկ վկայ ըլլալով: Աշակերտին համար անհաշուելի օգուտ ունի ամէն պատահութեամբ ֆրիստոսի կողմնակից ըլլալ: Տէրօջը հպատակն ըլլալը ծանուցանելու պատեհ ոչ մէկ առիթ զանց առնուելու է: Երբ աշակերտն անշուկ, համեստութեամբ և երկիւղածութեամբ միջոցներ կը փնտռէ իր աշակերտութիւնն յայտնելու, ապագայ տկարութիւններու գէժ ոյժ կը մթերէ իրեն համար:

Քրիստոնէական վկայութիւն տալու մէջ համարձակախօս ըլլալու բազմաթիւ լու պատճառներէն մին այս է: Քրիստոնեան պէտք ունի այն համարձակութեան, վստահութեան և անշարժութեան որ կը ստացուի վկայելով: Ամէն անգամ որ ֆրիստոսի համար կը վկայէ, իրեն և ուրիշներու համար աւելի յստակօրէն

կը գծէ իր դիրքը, և իր ու աշխարհասիրութեան միջև կ'ընդլայնէ անջատման վիճը: Ուրիշ խօսքով, կ'այրէ իր ետեւի կամուրջները: Աշխարհի հետ դաշնակցելու կամ անոր վերադառնալու կարգադրութիւններ չընեն: Իրեն համար կեանքն այլևս Յիսուս է միայն, և այդ բաւական է:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ [Խմբագրական]

Խմբագրական մեր պաշտօնը վերստանձնելն էս քիչ ետքը մեզի յանձնուեցաւ նամակ մը ուղղուած՝ մեր այն պաշտօնակցին որ այնքան կարողութեամբ վարեց թերթս մեր բացակայութեան միջոցին: Նամակը կը պարունակէր կարգ մը հարցումներ և կը խնդրէր որ անոնց պատասխանը տրուի Աւետ. Բողոքի միջոցով: Նամակագիրը վաղեմի բարեկամ մ'է և կը յուսանք որ պիտի ներէ պատասխանին յապաղման: Հիմա կը ջանանք իր պատասխանները տալ որչափ կրնանք: Նկատելով ինչ որ վերջերս երեւցաւ մեր սիւնակներուն մէջ՝ առաջին հարցումը կրնայ, կը կարծենք, զանց առնուի պատշաճապէս: Մնացեալները կ'առնենք իրենց կարգով:

2. «ԶԴաւիթ օծելու համար զրկուած Սամուելի բերանը Աստուծոյ կողմէ դրուած պատասխանէն կրնանք արտօնուիլ և հարցումներու այնպէս պատասխանել որ լսողը չփոթի ու մեր նպատակը չիմանայ: Սուտի երևոյթ չ'առնելու Մատթ. 23-րէ Խնկ. 29-րէն կրնայ այնպէս ընել:» Ակնարկուած այդ գէպքին մէջ մենք սեւէ խաբէութիւն չենք տեսներ, այլ միայն սքողում (ծածկել): Կ'երեւի թէ Սամուել սովոր էր այլևայլ տեղեր այցելել կրօնական պաշտամունքի առաջնորդելու նպատակով: Կեդրոնական կարգ մը քաղաքներ կային ուր կ'երթար կանոնաւորապէս և ուր մարդիկ կը ժողովուէին մեծ բազմութեամբ (Ս. Թագ. Է. 16): Բայց ժողովրդին հոգևոր բարելաւութեան բազմացող ըլլալով երբեմն ուրիշ տեղեր ալ կ'երթար որ ժողովրդէն ոմանք չ'մոռնային զԱստուծոյ: Այս պիտի ուղեւորութեան մը պահուն Աստուծոյ անոր հրահանգ կու տայ Բեթլեհէմ երթալու: Լոկ պատրուակ չէր այս, այլ իրական յանձնարարութիւն մը, թէև և նուազ կարեւոր քան ուրիշ մը որ անոր կապակցուեցաւ: Լաւ և յարմար բան էր որ մարդիկ համախմբուէին դո՛ւր համար, և Սամուել անոնց առաջնորդելու յարմար անձն էր: Որովհետև Սամուելի այցելութիւնն ուրիշ նպատակ ալ ունէր, այդ պատճառով Տէրօջը երկրպագու-

ԱՒԵՏԱՐԵՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ. ԿԵ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԻՆԿՂԱՅՐԻՍՈՒ ՕՐ:

Տարեկան գինն է ամէն տեղոյ համար կանխիկ 1 1/2 մեհիտիյի, վեցամսեայն՝ 3/4 մեհիտիյի: Թղթատարի ծախքը Խմբագրութեան վրայ է: Մէկ քերթի գինն է 30 փարս:

Խմբագրութեան վերաբերեալ նամակներ պարտին ուղղուիլ ան. Տր. Հ. Ս. ՊԱՐՆԸՄ, իսկ բաժանորդագրութեան վերաբերեալներն՝ ան. Տր. Ճ. Ք. ԿՐԻՆ, Ամերիկան Խան, Կ. պոլիս:

Ամերիկայի Մեհիտարաց Ընկերութեան կողմանէ, Ճ. Ք. ԿՐԻՆ, ԱՐՏՕՆԱՏԵՐ Հ. Ս. ՊԱՐՆԸՄ, ՏԵՐՏԵՆ-ԽՄԲԱԳՐԻՍ

ԱՂՕԹՔ

Աստուծոյ անունով: Ով Աստուած, յաւիտեան կան թագաւոր, որ լոյսը լաւարէն կը զատես և մահուան շուրջն առաւօտի կը փոխես, մեղմէ հեռացուր ամէն չար բազմանքներ, մեր սիրտերն յօժարեցուր քու օրէնքդ պահելու, և մեր ստքերն առաջնորդէ դէպ ի խաղաղութեան ճամբան, որպէս զի ցորեկը զուարթութեամբ քու կամքդ ընելով կարենանք, երբ դիշեր ըլլայ, ուրախանալ քեզի փառք տալով մեր Տէրօջը Յիսուսի ֆրիստոսի ձեռքով: Ամէն:

Երեկոյեան: Ով Տէր և Աստուած մեր, միայն դուն կարող ես ապահովութեամբ մեզ ապրեցնել: Այս գիշեր խաղաղ քնով կազդուրէ անոնք որ յոգնած են ցորեկուան աշխատութիւններով, և սորբմութեամբք վնասէ պաշտպանէ ամէն անոնք որոնք քեզի կ'ապաւինին, որպէս զի հանգչելու համար խաղաղութեամբ պառկելով ոչ մէկ չարիքէ վախնանք, այլ վստահաբար յանձնուինք քու սուրբ պահպանութեանդ մեր Տէրօջը Յիսուսի ֆրիստոսի ձեռքով: Ամէն:

Թիւնը նուազ օգտակար պիտի չըլլար Բեթ-
լեհեմացիներուն, որոնք տեղեկութիւն մը
չունէին անոր վրայ: Սաւուղի օծումը պահ
մը դադար պահուած էր: Նոյն ընթացքը պիտի
բռնուէր նաև Դաւթի օծման նկատմամբ: Սուտ
չխօսելու պարտականութիւնը մեզ
չբռնադատեր ըսել ամէն բան զոր գիտենք
մենք: Քրիստոս մաքրուած բորոտին պատուի-
րեց երթալ եւ իր ընծաները տալ իր մաք-
րութեանն համար, բայց չըսել թէ Ինչպէս
մաքրուեցաւ:

Սամուէլ սրոջ պատուէր մը ստացաւ Աս-
տուծմէ եւ չէր կրնար տարակուսիլ իր պար-
տականութեան վրայ: Մենք ալ անոր պէս
ընելու ենք նման պարագաներու տակ: Օրի-
նակ մը ենթադրենք: Դրացիի մը ամբողջ
ընտանիքը տունէն բացալից են եւ ես կեր-
պով մը կ'իմանամ թէ գողերն անոր տունը
մտնելու խորհուրդ կ'ընեն: Ինծի կարեւոր
է յուր զրկել զբացիլիս, բայց գաղտնապէս
զրկել: Որդիս նպարտախաբան կը զրկեմ
քաջ մը շաքար գնելու եւ կը պատուիրեմ
անոր՝ զբացիլիս խանութն հանդիպիլ եւ պատ-
մել պատրաստուած դաւը: Ճամբան որդիս
կը պատահի գողերէն մէկուն որ որդւոյս կը
հարցնէ թէ ո՛ւր կ'երթայ, եւ որդիս կը պա-
տասխանէ, «Բայ մը շաքար գնելու»: Մեր
տեսութեամբ պատշաճ է այսպիսի պատաս-
խան մը: Չայտնիք ամբողջ ճշմարտութիւնը,
բայց ճշմարիտ է: Շաքարն առանին պէտք
մ'է, թէեւ այսչափ շուտով պիտի չգնուէր
եթէ մեր զբացիլին վտանգը չըլլար:

Ուրիշ օրինակ մը ենթադրենք: Բարեկամ
մը ձեռնարկած է փախչիլ բարկացած մար-
դոց երեսէն որոնք որոջած են անոր վրասել:
Երկու ձամբաներու իրար կտրած մէկ կէ-
տին վրայ կ'անցնի մեր քովէն եւ կը բռնէ
ձամբայ մը: Բայց մեզի կ'ըսէ թէ իր նպա-
տակն է քիչ մը տեղ երթալէ ետքը արտե-
րուն մէջէն միւս ձամբան ելլել: Քատորդ
ժամ ետքը անոր հալածիչները կու գան եւ
անոնց հարցումներուն ի պատասխանի կը խոս-
տովանինք թէ տեսնաք զայն, կ'ըսենք թէ
ո՛րչափ ժամանակ առաջ տեսանք, եւ կը ցու-
ցնենք այն ձամբան զոր բռնեց ան եւ բան
մը չենք յայտնի անոր միւս ձամբան ելլե-
լու դիտարկութեան վրայ: Շիտակ ըրի՛նք:
Մեր անձնական կարծիքը, սրու համար ու-
րիշ ոչ ոք պատասխանատու համարուելու է,
սա է թէ այսպիսի պատասխան մը ամբող-
ջովին պատշաճ է: Ինչ որ կ'ըսենք՝ ճշմա-
րիտ է, եւ մենք պարտական չենք տեղե-
կութիւն տալ մեր բարեկամին գաղտնիքին
վրայ որ մեզի հարցողուեցաւ: Գիտենք թէ
հոս վտանգաւոր գեանի վրայ կը կոխենք:
Ճշմարտախօսութիւնն հիմնական առաքի-
նութիւն է: Բարոյագիտական իրական հիմ
մը ունի սա առածը, «Յուցուր ինծի ստա-
խօս մը եւ ես քեզի ցուցնեմ դող մը»: Մարդ
մը որ ճշմարտախօսութեան սէր չունի՝ ու-
վորաբար չունի սէր ուղղութեան: Եւ ա-
ռանց տարբեր երկիրներ իրարու հետ բազ-
մապէս ձեռնարկելու կ'ըսենք թէ ճշմարիտ
չխօսիլը Արեւելոյնները պաշարող մեղքերէն
մէկն է: Մենք գիտենք թէ շատ մայրեր, թե-
րեւս մայրերու մեծագոյն մասը, իրենց զա-
ւակներուն չեն վարանիր սուտեր խօսիլ զա-
նոնք հանդարտեցնելու համար: Շատ վա-
ճատականներ եւ թերեւս վաճառականներու
մեծագոյն մասը չեն վարանիր իրենց յաճա-
խորդներուն սուտ խօսիլ աւելի շահ ընելու
համար: Մեծապէս պիտի ցաւինք եթէ ոեւէ
մէկուն առջեւ պակասեցնենք ճշմարտութեան
նուիրականութիւնը: Բայց ճշմարտախօսու-

թեան դատին ծառայութիւն մը չենք մա-
տուցաներ անոր պահանջումները չարագան-
ցելով:

Յ. «Ոչ-ուղղափառ ուսուցիչներ կրնան
օգտակարապէս գործածուիլ կրթական հաս-
տատութիւններու մէջ»: Իբրեւ ծնողք պար-
տական ենք մեր կրցածն ընել Աստուծմէ
մեր խնամքին աւանդուած տղայոց բա-
րելաւութեան համար: Եթէ մեր տան
կայնուղին կամ զարմանքի ուրիշ ոեւէ
բան կը վնասէ մեր տղայոց առողջութեան,
յանցաւոր կը մնանք եթէ այդ չարիքը չզար-
մանենք: Եթէ ծաղկալատ կը ծագի մեր քա-
ղաքին մէջ, իրաւունք չունինք մեր դա-
ւակներն անպատուաստ թողլու: Շատեր
կան որոնք իրենց ծնողաց մեղապարտ ան-
հողութեամբ կուրացած են այս սոսկալի
ախտին պատճառով: Տղայոց հոգիներն ալ
անոնց մարմիններուն նման ծնողաց խնամ-
քին յանձնուած են: Հայր մը նոյնչափ պար-
տական է դաստիարակութիւն տալ իր զա-
ւակներուն, եթէ հնար է, որչափ պարտա-
կան է հաց տալ անոնց: Պարտական է նոյն-
չափ պաշտպանել գանոնք ամէն բարոյական
չարիքէ որչափ առողջութեան վնասող բա-
ներէ: Չանալու ենք մեր զուակներուն ա-
պահովել առողջ հոգի մը առողջ մարմնի մէջ:
Բոլոր մեր աշխատութիւններուն եւ ջանքե-
րուն նպատակն այս ըլլալու է:

Արդ շատ անգամ շատ մեծ է ուսուցիչի
ազդեցութիւնն իր աշակերտներուն վրայ:
Մեր թղթակցին հարցումը շատ տարբեր է
սա հարցումէն թէ արդեօք կրնա՞նք օգտա-
կարապէս գործածել ոչ-ուղղափառ դերձակ
մը: Դերձակի մը համար ինչ որ պէտք ու-
նինք հարցնելու՝ սա է ընդ ամենայն թէ լաւ
զգեստ կը կարէ՞ եւ ածան կը չինէ՞: Չկրնար
ան իր անուղղափառութիւնը զգեստին վրայ
կարել, եւ, եթէ զգեստը լաւ չինուած է,
մեզի տարբերութիւն չընէր թէ սո՛ւրբ մը
չինեց զայն թէ հեթանոս մը: Սակայն ու-
սուցիչը մեր զաւակներուն զգեստներուն
վրայ չգործեր, այլ անոնց հոգիներուն վրայ:
Մեր զաւակները կը մաշեցնեն դերձակին
կարածը կամ քանի մը ամիսէն չեն կրնար
գործածել մեծնալով: Ուսուցիչն որո՞ք կրնայ
անոնց բարոյական էութեան հիւսկէնին մէկ
մասը կազմել ցորչափ ապրին անոնք: Եւ
ծուռ գաղափարները երբ ուսուցչէ մը սու-
նուին՝ աւելի վտանգաւոր են քան երբ հան-
րածանօթ չար անձէ մը առնուին, քանզի
տղայք անգիտակցաբար կ'ընդունին, կը ծծեն
գանոնք: Սակեօք ունէինք մենք ուսուցիչ
մը, եւ լաւ կը յիշենք կեղծաւոր ստահակը,
որ ուրիշ կնոջ մը յարեցաւ եւ փորձեց իր
կնոյն թունաւորել որպէս զի միւսին հետ
ամուսնանար: Իր կնոջ հիւանդութեանը մի-
ջոյն շատ վախկութիւն ցուցուց կեղծա-
ւորութեամբ, բայց թոյն խառնեց այն կե-
րակուրին հետ զոր տուաւ անոր: Բարե-
բախտաբար բժիշկն իմացաւ իրողութիւնը
եւ թշուառականը շուտով կրեց անձամբ իր
ոճրին պատիժը: Նոյնպէս կրնայ ուսուցիչ մը
վնասակար մտորութիւններ խառնել իմա-
ցական կերակուրին հետ զոր իր աշակերտ-
ներուն կը ջամբէ: Կ'ըսէ անոնց շատ բաներ
որ ճշմարիտ են եւ քանի մը բաներ որ ճշմա-
րիտ չեն: Եւ որչափ յաջող ըլլայ իբրեւ ու-
սուցիչ, նոյնչափ մեծ կ'ըլլայ վտանգը եթէ
ծանր մտորութիւններ ունենայ: Ան կ'ար-
թընցնէ աշակերտներուն միտքերը, հետա-
զօտութեան ոգի կը յարուցանէ անոնց մէջ
եւ բաներու պատճառին ու կերպին նկատ-
մամբ անոնց կողմէ ուղղուած այնչափ շատ

խնդիրներ կը լուծէ որ անոնք կը վարժուին
գրեթէ աներկմիտ հաւատով ընդունիլ ամէն
ինչ որ անոր շրթունքէն կ'ելլէ:

Երկու նկատողութիւնները զորոնք յիշե-
ցինք՝ կը ցուցնեն, կը կարծենք, թէ քրիս-
տոնեայ ծնողներ եւ քրիստոնեայ ժողովուրդ-
ներ հետաքրքրի ըլլալու են անոնց նկա-
րագրին ու կարծիքներուն զորոնք ուսուցիչ
կը կարգեն իրենց զաւակներուն: Այս երկ-
րին մէջ, փոխանակ փոքրերն օրը երեք ժամ
եւ մեծերն հինգ ժամ զարոց զրկելու, ինչ-
պէս կ'ընեն ուրիշ քանի մը երկիրներ, փոք-
րերն յաճախ զարոց կ'երթան առաւօտուն
կանուխ եւ հոն կը մնան մինչեւ գրեթէ
մթնշաղի ժամանակ, եւ այս իսկ պատճա-
ռով աւելի կարեւոր է հարցնել ոչ միայն
«Ի՞նչ գիտէ ուսուցիչը», այլ եւ «Ի՞նչ տե-
սակ մարդ է ան»:

Բայց չենք ուղեր որ մեր ժողովուրդները
խիտ անձկամատութիւն ցուցնեն: Եթէ ու-
սուցիչն աղէկ մարդ կամ կին մ'է, ուղիւ չէ
պահանջել որ ամէն երկրորդական գործերու
վրայ ճիշտ մեր տեսութիւններն ունենայ:
Շատ կէտերու վրայ կարծիքի շատ տարբե-
րութիւն պիտի գտնուի աշակերտներու ծնող-
ներուն միջեւ: Ոչ մէկ պարագայի մէջ իբ-
րեւ ուսուցիչ պիտի գործածէինք այնպիսի
մարդ մը որու բարոյական կեանքն ապա-
կանեալ է: Որչափ հնար է, մեր զաւակ-
ները պահպանուելու են այդպիսիներու հետ
սերտ առնչութիւններ ունենալէ: Կրօնա-
յին հաւատքի գալով, անշուշտ պիտի չգոր-
ծածէինք այնպիսի անձ մը, որ իր Սկեպտա-
կանութեամբ կը պարծի եւ նոյնքան ջանա-
դիր է ի հանդէս բերել իր Սկեպտականու-
թիւնը որչափ ջանադիր է ի ցոյց գնել իր
ժամացոյցին ոսկի շղթան: Սակայն մէկը որ,
ըսենք թէ, չափազատութեան այցելու զա-
սատու է եւ լաւ կ'ուսուցանէ, կրնայ կրօ-
նային մեծ տարակոյսներ ունենալ զորոնք
կրցած չէ դուր փարատել եւ զորոնք ա-
կայն բնաւ չյիշատակեր իր աշակերտներուն
առջեւ: Այդպիսի մէկուն պաշտօնանկու-
թիւնը պիտի չջատադուլէինք բնաւ: Սմերի-
կայի մէջ, ուր մէկտեղ կը դաստիարակուին
ամէն կրօնքէ աշակերտներ, հասկցուած է
թէ կրօնք պիտի չուսուցուի հանրային դպրոց-
ներու մէջ, այլ եկեղեցիներուն ու տունե-
րուն մէջ: Կը խոստովանինք թէ մեր միտքն
աւելի անգորր կ'ըլլայ երբ մեր զաւակներն
յանձնենք այնպիսիներու, որոնք մեզի պէս
կը հաւատան ամէն այն բաներուն մէջ զո-
րոնք էսկան կը համարինք:

ՆՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԱԻՅՏ ԲՈՂՈՔԱԿԱՆՍՅ

[Հետեւեալն է Աւետ. այն նոր Քրիստո-
նէականը որ, ինչպէս ակնարկուեցաւ թեր-
թիս նախորդ թիւերէն միով, պատրաստուած
է յանձնաժողովէ մը որուն անդամները կը
ներկայացնեն Մեծ Բրիտանիոյ գլխաւոր բո-
լոր Բողոք. յարանուանութիւնները բայ ի
Պետական Եկեղեցիէն:]

1. Հարցում. Ինչ է քրիստոնէական կրօնքը:
Պատասխան. Այն կրօնքն է զոր հիմնեց Յի-
սուս Քրիստոս, մեր Տէրը եւ Փրկիչը, որ
մեզի բերաւ Աստուծոյ եւ յաւիտենական
կենաց լիութի գիտութիւնը:
2. Հ. Ինչ գաղափար ունենալու ենք Աս-
տուծոյ վրայ:
Պ. Աստուած է միակ յաւիտենական Հո-
գին, ամէն բանի Ստեղծիչը եւ Պահպանիչը:
Սէր է ան, իմաստութեամբ ու զօրութեամբ
անսահման, սրբութեամբ ու արդարութեամբ,

ողորմութեամբ ու ճշմարտութեամբ կատարեալ :

3. Հ. Անոր ինչ անուն տալ սորվցուց մեզի Յիսուս :

Պ. « Հայր մեր որ երկինքն ես » :

4. Հ. Ինչ կը սորվինք այս Հայր անունէն :

Պ. Կը սորվինք թէ Աստուած իր պատկերին պէս ստեղծեց մեզ, թէ կը հոգայ մեզ իր իմաստուն նախախնամութեամբ, եւ թէ կը սիրէ մեզ շատ աւելի քան զոր կարող է երկրաւոր սեւէ հայր :

5. Հ. Ինչ կ'ըսէ Յիսուս իրեն համար :

Պ. Կ'ըսէ թէ Աստուծոյ Որդին է ինք, զոր Հայրն իր մեծ սիրով աշխարհ զրկեց՝ մեզ մեղքէ փրկելու համար :

6. Հ. Ինչ է մեղքը :

Պ. Մեղքն է սեւէ խորհուրդ կամ զգացում, խօսք կամ գործ, որ Աստուծոյ սուրբ խօսքին հակառակ է կամ անոր պահանջման անհամաձայն :

7. Հ. Ըսէ համառօտիւ թէ ինչ կը պահանջէ Աստուծոյ օրէնքը :

Պ. Կը պահանջէ սիրել զԱստուած մեր բոլոր սրտով եւ մեր ընկերը մեր անձին պէս :

8. Հ. Մենք մեղմով կարող ենք այդպէս ընել :

Պ. Ոչ : Բանդի թէեւ մարդս անմեղ ստեղծուեցաւ ի սկզբան, սակայն ինկաւ անհնազանդութեան մէջ եւ յայնմհետէ ոչ ոք կարող է իր անձնական զօրութեամբ պահել Աստուծոյ օրէնքը :

9. Հ. Ինչ են մեզայ հետեւանքները :

Պ. Մեղքն Աստուծոյ կը դատէ մարդը, կ'ապականէ անոր ընտրութիւնը, բաղմապիսի ցաւերու եւ վիշտերու կ'ենթարկէ եւ, եթէ չզղջայ, յաւիտենական մահուան կը մատնէ զայն :

10. Հ. Կրնանք մենք մեզ ազատել մեղքէ եւ անոր հետեւանքներէն :

Պ. Ոչ երբեք : Բանդի անկարող ենք թէ մեր սիրտերը սրբել, թէ մեր յանցանքներուն համար հատուցում ընել :

11. Հ. Աստուծոյ Որդին ինչպէս փրկեց իր ժողովուրդն իրենց մեղքերէն :

Պ. Մեր փրկութեան համար երկինքէն եկաւ, Հոգևով Սրբով մարմին առաւ Կոյս Մարիամէ, մարդացաւ, եւ դարձեալ մեզի համար խաչուեցաւ Պանտաքի Պիլատոսի օրով : Չարչարուեցաւ եւ թաղուեցաւ եւ երրորդ օրն յարութիւն առաւ ըստ Սուրբ Գրոց, եւ երկինք համարձակ եւ նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը :

12. Հ. Ինչ օգուտ կը քաղենք մենք Աստուծոյ Որդւոյն մարդեղութենէն :

Պ. Միջնորդ մը ունինք Աստուծոյ եւ մարդոց միջեւ, Մէկը որ իբրեւ Աստուած կը յայտնէ մեզի թէ ինչ է Աստուած, եւ իբրեւ կատարեալ Մարդ կը ներկայացնէ մարդկութիւնն Աստուծոյ առջեւ :

13. Հ. Ուրիշ ինչ օգուտ կը քաղենք մեր Տէրջը երկրաւոր կեանքէն :

Պ. Անով ունինք եղբայրակից մարդ մը որ մեր տկարութիւններուն կարեկից է, ինչպէս եւ կատարեալ օրինակ ամենայնի որ պարտիմք ըլլալ :

14. Հ. Մեզի համար ինչ բան կատարեց խաչին վրայ մեռնելով :

Պ. Ինքզինքն անարատ զոհ մը ընելով Աստուծոյ, լրացուց Աստուածային սրբութեան պահանջումները, քաւութիւն ըրաւ բոլոր մեր մեղքերուն համար եւ կտարեց մեզայ զօրութիւնը :

15. Հ. Ինչ կը սորվցնէ մեզի Յիսուսի յարութիւնը :

Պ. Կը սորվցնէ թէ Յիսուս կատարած է

մեր փրկութեան գործը, թէ մահուան իշխանութիւնը վերջացած է եւ թէ, որովհետեւ ան կենդանի է, մենք ալ կենդանի պիտի ըլլանք :

16. Հ. Ինչ կը սորվինք անոր երկինք համբաւանալէն :

Պ. Կը սորվինք թէ անոր անձովն ունինք մենք Հօրը քով Բարեխօս մը, որ « միշտ կենդանի է » մեզի համար « բարեխօս ըլլալու » :

17. Հ. Ինչ կը սորվինք անոր՝ Աստուծոյ աջ կողմը նստելէն :

Պ. Կը սորվինք թէ ան բարձրացած է իբրեւ մեր Գլուխը եւ Թագաւորը, որուն տրուած է ամէն իշխանութիւն երկնից մէջ ու երկրի վրայ :

18. Հ. Յիսուս ինչպէս յառաջ կը վարէ տակաւին փրկութեան իր գործը :

Պ. Օրհնեալ Երրորդութեան երրորդ անձին, Սուրբ Հոգիին, միջոցով որ զրկուեցաւ Պենտեկոստէին օրը :

19. Հ. Ինչ է օրհնեալ Երրորդութեան խորհուրդը :

Պ. Սա է թէ Հայրը, Որդին եւ Հոգին Սուրբ, որոնց անունով կը մկրտուինք մենք, մէկ Աստուած են :

20. Հ. Ինչ ընելու ենք որ փրկուինք :

Պ. Մեր մեղքերուն համար ապաշխարելու եւ Տէր Յիսուս Քրիստոսի հուսատալու ենք :

21. Հ. Ապաշխարին ինչ է :

Պ. Ան որ ճշմարտապէս կ'ապաշխարէ իր մեղաց համար՝ ոչ միայն կը խոստովանի զանոնք ամօթով եւ արտմութեամբ, այլ մահաւանդ կը թողու զանոնք եւ Աստուծոյ կը դառնայ թողութիւն գտնելու անկեղծ փափաքով եւ այլեւս չմեղանչելու հաստատ նպատակով :

22. Հ. Տէր Յիսուս Քրիստոսի հաւատաւն ինչ է :

Պ. Անոր ապաւինիլ իբրեւ մեր Վարդապետին, Փրկչին եւ Տէրոջը, բոլոր մեր վստահութիւնը գնելով Աստուծոյ շնորհաց վրայ Քրիստոսի ձեռքով : (Շարձակէն)

ՓԱՆԱՄԱՅԻ ՆՈՐ ԶՐԱՆՅՔԸ (Շարձակէն Ինչ է Ինչը)

Փանառայի նոր Զբանցքը : 1894 Հոկտեմբերին, նոր ընկերութիւն մը կազմուեցաւ ջրանցքը աւարտելու նպատակաւ : Կազմակերպուեցաւ 3,000,000 ոսկի պատրաստ գրամադրով եւ, երեւմտական աշխարհին մէջ նշանաւոր դիրք մը առաւ համար ձեռնարկին, բաժնետոմսերը գնուեցան Գաղղոյ գլխաւոր երեւմտական հաստատութիւններէն : ամբողջ 3,000,000 ոսկի, որ իսկ եւ իսկ վճարուեցաւ ալ : Քողմագիտ կառավարութիւնը պաշտօնապէս ճանչցաւ Ընկերութիւնը, եւ օրինաւորապէս վաւերացուց անոր մենաշնորհը, եւն :

Նոր աշխարհը երբ գործն ստանձնեցին, շատ պատշաճօրէն որոշեցին որ իրենց առաջին պարտականութիւնն էր ծրագրին ճարտարագիտական կողմը ուսումնասիրել լիովին, որուն մէջ թիրանալուն պատճառաւ անյաջողութեան մատնուեցաւ հին ընկերութիւնը : Նաեւ որոշեցին գործն սկսիլ բաւական ընդարձակութեամբ, այն նպատակաւ որ հասկցուի թէ ինչ նիւթերու պիտի պատահէին պեղումները կատարելու եւ այլեւայլ թումբերը եւ փակոցները շինելու ժամանակ : Ասոր համար հարկը յիսուն ճարտարագէտներէ մարմին մը դրուեցաւ պեղման տեղը եւ քանի մը հազար գործաւորներ՝ աւելի կարեւոր կէտերու վրայ, որոնց մէջ էր նաեւ մեծ Քրիստոսի պեղման տեղը :

Քրիստոսի պեղումը : Տը Լէսէփսի ճարտարագէտներուն փորձառութիւնը եւ Քրիստոսի պատահական այցելուներուն գաղափարը համաձայնութեամբ սա համոզմամբ դոյացուցին թէ թոյլ նիւթին փչելուն պատճառաւ կարելի պիտի չըլլայ այս մեծ խրամը յաջողութեամբ պեղել : Ուստի նոր ընկերութիւնը բաղմաթիւ գործաւորներ հաւաքեց այս կէտին վրայ եւ էմիէրատորի մէջ ստուգելու նպատակաւ ընտան ներքին նիւթին ընտրութիւնը : Զրանցքին երկայնքովը 1,100 ոտը երկայնութեամբ փապուղի մը պեղուեցաւ, եւ յեցական ոտը արամազծով տասը տասներկու հորեր փորուեցան այլեւայլ կէտերու վրայ հողին մէջէն դէպի վար մինչեւ ջրանցքին յատակին համար առաջադրեալ մակերեսը, եւ այս հորերը իրարու հետ կապակցուեցան կարճ փապուղիներով : Շատ ծախք դնաց ստոր, բայց անհրաժեշտ պէտք էր ճիշդ հասկնալու համար թէ կարելի էր ջրանցքը աւարտել եւ ս'ըջափ ծախքով : Այսպէս ձեռք բերուած ապացոյցով հաստատուեցաւ թէ գոյութիւն չունէր « Քրիստոսի սահուն լեռը » վասն զի պեղումը թոյլ նիւթին վերի խաւին մէջէն անցնելով հասաւ պինդ ժայռին :

Շարձակէն Ինչ է Ինչը : Նոր ընկերութեան համար լուծելի ուրիշ խնդիր մըն է անհանդարտ Շահրէս գետին զսպումը :

Նոր ընկերութիւնը իր առաջին քայլին մէջ որոշեց թողուլ Տը Լէսէփսի ծովուն մակերեսին հաւասար ջրանց պեղելու անհեթեթ գաղափարը, եւ անոր տեղ պեղել փակոցներով ջրանցք մը : Այս որոշումը բաւական ջուր հայթայթելու խնդիրը բացաւ թէ ինչպէս պիտի փոխանակուէին կորուստները որ ջրանցքին ջուրը բաւական բարձր մակերես ունենար : Շահրէս գետին հասանքները յայտնի էր թէ առատ ջուր կը մատակարարէին, եւ խնդիրը այնուհետեւ Շահրէս գետին ջուրին քանակութիւնը հետադատելու կերպարանը կ'առնէր, եւ թէ կարելի է գանիկա յարմար ընդունարաններու մէջ ամբարել, որ միանգամայն թէ՛ ջուրին մակերեսը բարձր պահուի եւ թէ՛ Շահրէս գետին խուժումը զսպուի սղողումներու ժամանակ : Շահրէսի զսպման խնդրին հետ զուգորդուեցաւ ջրանցքին ջուրին ամենէն բաղձալի բարձրութեան եւ փակոցներու թիւին եւ տեղերուն խնդիրը :

Հետազօտութիւնը յանձնուեցաւ 130 ճարտարագէտներու, որոնք իրենց օգնական մարմիններուն հետ չորս տարի ընդարձակ քննութիւններ կատարեցին, որոնց ամբողջ ծախքն եղաւ գրեթէ 300,000 ոսկի : Հետազօտութիւնը ամենափոքր մանրամասնութեանց իջաւ, եւ իւրաքանչիւր կամարակապ ճամբայի, կամուրջի, եւն. դժագրութիւնն այնպէս ճարտարութեամբ յորինուած է, որ երբ հրաման ընդունուի երթալ աշխատելու, այս յատակադիմները կրնան զբոկուիլ գործատեղիները : Մենք այդ ճարտարագործական իրերը քննելու հաճոյքն ունեցանք եւ կրնանք վկայել թէ յատակադիմները, կողմնական նկարները, քարտէսները, գործատեղիները գժագրութիւնները, արձանագրութիւնները, եւն. այնքան կատարեալ են որ կը գոհացնեն ամենէն դժուարահաններն ու բժախնդիրներն իսկ :

Յայտնի է թէ նոր ընկերութեան սրտին մէջ լաւ տարւորուած է առաջինին սխալումներուն եւ անյաջողութեանց ուսուցած դասը : Բայց որպէս զի աւելի օգուտ քաղուի ճարտարագէտներուն զիւտերէն, խնդրեց որ

այլևայլ ազգայնութիւններէ բաղկացեալ շահաւոր ճարտարագէտներէ մասնազիտական յանձնախումբ մը կարգուի որոնց նմանօրինակ գործի մէջ ունեցած փորձառութիւնը մասնաւոր յարմարութիւններ կու տայ առնոց՝ պատրաստուած յատակագիծներուն վրայ դատում ընելու :

Յանձնախումբը որ կազմակերպուեցաւ 1896ին՝ իր անդամներէն ունեց միջոցաւ զինութիւններ կատարեց Պարսնոցին վրայ պեղուած ջրանցքին վրայով, եւ վերջին 13 տարիներուն անձրեւներու եւ ոչողուններու տեղային արձանագրութիւնները իր առջև ունենալէն զատ, երկու տարուանս մէջ անձրեւներու եւ Շաիրէսի յորդուններուն եւ հեղեղներուն բուն իր բազմաշխատ արձանագրութիւնները պատրաստեց, եւ 100 նիստէ աւելի ունեցաւ : Ներկայացուց միաձայն տեղեկագրութիւն մը 1898 Դեկտ. 2ին, որ, ի նկատ առնուելով անդամներուն դիրքը եւ փորձառութիւնը, թերեւս իր տեսակին մէջ ամենէն մեծարժէք գրութիւնն է :

Տեղեկագրութիւնը լիովին կ'ընդունի նոր ջրանցքին յատակագիծները եւ ծախքի հաշիւները :

Փաստայէ նոր Զբանցք : Միջազգային Յանձնախումբը կը գտնէ թէ ջրանցքի գործին երկու հինգերորդը կատարուած է հիմա, թէ գործը նոր ծրագրիներուն համեմատ աւարտելու համար 20,000,000 ոսկի ծախք պիտի ըլլայ : Եթէ հարիւրին 20 յաւելում ըլլայ պատահական ծախքերու համար, ամբողջ ծախքերու գումարը կը հասնի 24,000,000 ոսկիի, եւ այսպէս գործը պիտի աւարտի ութէն տասը տարիէն առանց հաշուելու գործելու եւ գործատուներու մեթոտներուն հաւանական զարգացումը : [Յետոյ կու գայ գործին արուեստական նկարագրութիւնը, զոր զանց կ'ընենք, վասն զի դժուար է հասկնալ առանց Սոյնի Բիշէ և Արեւելի մէջ գրուած քարտէսին, զոր չենք կըրնար զննել հոս :

Առողջութեան խնդիրը : Գիտական Յանձնախումբը խնամով քննած է մահերուն խնդիրը եւ սա եզրակացութեան հասած է թէ կլիմային վրայ տարածայնուած աննպաստ խօսքերը չափազանցուած են : Ճշմարիտ է թէ գործողութեան առաջին տարիներուն մէջ առողջապահութեան մասին անհոգութիւն եղաւ, թէ գործաւորները սովորած չէին արեւադարձներուն մէջ ծանր աշխատութեան, եւ թէ երբ դեռնին մակերեսի հողերը որ տեսնուի սերմերով լեցուն էին բացուեցան, կեանքի շատ կորուստ եղաւ : Բայց վերջին տարիներու մէջ Բրիտանական Անթիլիաններէն եկող սեւամորթներ աշխատեցան, որոնք սովորած են կլիմային, եւ որովհետեւ պեղուները աւելի խոր իջան մինչեւ ժայռերու կազմութիւնը, հիւանդութեան քանակութիւնը սովորականէն տարբեր չէ :

Նոր Զբանցքի և Հին Զբանցքի Ընկերութիւններու յարաբերութիւնը : Վերջապէս, պատասխանելով սա անհրաժեշտ հարցման թէ նոր ընկերութիւնն ինչ յարաբերութիւն ունի հին ընկերութեան գրամական բեռներուն հետ, կ'ընանք ըսել համառօտիւ թէ հին ընկերութեան բաժնետէրերը իշխանութիւն մը չունին նոր ընկերութեան վրայ : հաշուեյարգարը ստացուածքը վերջինին վրայ կը դարձնէ, պայմանաւ որ հին ընկերութեան յարմնետէրերը հարիւրին մինչեւ 60 բաժին առնեն շահերէն, շինութեան ծախ-

քերը, զնոյ անկումները, շինութեան բաժնետէրերուն շահերը եւ նոր գրամագլխին շահաբաժիններն հանելէ ետքը :

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ և ԱՅՏԵՐՈՒ ԲՈՒԺՄԱՆ ՄԷՋ

Ըստ Վէտիի, Առաքելիցի ճակատամարտէն ետքը Պալիէրայի մէջ բանակող Գաղղիական զինուորներուն մէջ 100 հիւանդ միայն կը գտնուէին 8,000 մարդէ բաղկացեալ գունդի մը մէջ, որ ըսել է հարիւրին մէկէ քիչ աւելի : Մինչ ընդհակառակն երբ բանակը կարօտութեան մէջ ըլլայ կամ վատի պարտութեամբ կամ իր պետերուն վրայ անվստահութեամբ, հիւանդներուն համեմատութիւնը ահաւոր կերպով կ'աճի : Մտքին զուարթ վիճակը այնքան ազդեցիկ է կազմութեան մէջ սփռուող ջլային աւելի ստող շերտերով շինուած շնորհիւ որ հիւանդի բուժումներ կը պատահին ժամանակ ժամանակ, զորոնք կարելի չէ ասկէ զատ ուրիշ պատճառի ընծայել : Սըր Հըմֆրի Տէյլիի դիտողութեան առարկայ եղաւ եզակի եւ հրահանդէզ դէպք մը երբ պատանկութեան առեւ կ'օգնէր Տր. Պէտտոսի անոր բորակային սքրիտ ներշնչելու փորձեր կատարած ժամանակը : Տր. Պէտտոս մակաբերած ըլլալով թէ այդ սքրիտը մասնաւոր ներգործութիւն ունի անդամալուծութեան վրայ, հիւանդ մը ընտրուեցաւ փորձի համար եւ Տէյլիի խնամքին ներքեւ գրուեցաւ : Կազմ մատակարարելէ առաջ Տէյլի Չերմաչախի մը զրաւ հիւանդին լեզուին ներքեւ անոր բորեխառնութիւնն ստուգելու համար : Անդամալուծեալ անձը, բոլորովին անգիտակ այն գործողութեան որուն պիտի ենթարկուէր, բայց խորապէս համոզուած թէ Տր. Պէտտոս անշուշտ պիտի յաջողի, հաղիւզաց իր լեզուին յետակողմը դրուած Չերմաչախը, եւ ահա խորհեցաւ թէ գործողութիւնն սկսած էր, եւ իր սքրիտացումէն պնդեց թէ արդէն անոր բարեբար ներգործութիւնը կը զար իր բոլոր մարմինն մէջ : Պատահութիւնը այնքան հրապուրիչ էր որ կորսնցնել չէր ըլլար : Տէյլի ուրիշ բան չըրաւ, միայն ըսաւ որ ախտացեալը նորէն դոյ յաջորդ օրը : Նոյն արարողութիւնը կրկնուեցաւ, նոյն արդիւնքը տեսնուեցաւ, եւ տասնըհինգ օր յետոյ մարդը բուժուած արձակուեցաւ : Չերմաչախէն զատ ուրիշ դարման գործածուած չէր : Ուրիշ նշանաւոր դէպք մըն ալ պատահեցաւ Պրէտայի պաշարման միջոցին 1623ին : Երբ պահապան գործը անձնատուր ըլլալու վրայ էր ընդադարի (ըսքորիթիլի) նախձիւններուն պատճառաւ, Օրանփի իշխանին հրահանգովը քանի մը շիշ կեղծ դեղ գործածուեցաւ իբրեւ անյութեւ եւ յատուկ դարման, եւ անկէ կաթիլ կաթիլ դրուելով հիւանդի արդիւնքները յառաջ եկան : Այնպիսիներ որ առաջ ամիսներով չէին շարժած իրենց անդամները, կը քալէին փողոցներուն մէջ շիտակ եւ առողջ, եւ շատեր որ կ'ըսէին թէ աւելի գէշցած էին բոլոր նախորդ դեղերէն, քանի մը օրուան մէջ աղէկցան եւ անբացատրելի ուրախութիւն կը զգային : Ուրիշ դէպք մը եւս որ հաստատուած եւ ստուգուած է, երկարակամ հրաշքի կոչուի համար գործածուած գունատի մը կատարած դերն է : Այդ գունտը Ինակուա կղզիին ծովեզերքը եկաւ : Ամերիկեան հիւպատոսը, կատակախօս անձ մը, երբ իրենց ցուցուց այդ ստարկան զանիկա գանող ընկի մը, ըսաւ թէ այդ գունտը Ամերիկեան մեծ դարման էր յօղացուածութեան, թէ պէտք էր

զանիկա ախտացեալ մասին վրայ զննել : Մարդուն կինը որ յօղացաւ է կը տառապէր, այնպէս ըրաւ, եւ ըսաւ թէ բուժուեցաւ : Էրիկը իր ակուպի ցաւին գործածեց զայն : Սա վկայութիւնը տրուեցաւ : «Միշտ գարման է յօղացաւ : ակուպի ցաւը կը սրկուեցնէ միայն, բայց չդադրեցներ :»

ԽՈՒՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՍՒԱՆՏԻՈՅ ՄԷՋ

Մր. Թորոտսըն աւարտած է Իսլանտիոյ խուզարկութիւնը, որուն նուիրած է իր արձակուրդները անցեալ տասնըհինգ տարիներէն ի վեր : Հիմա պիտի գրէ կատարեալ պատմութիւնն իր աշխատութեանց արդիւնքներուն, որ պիտի հրատարակուի իր Իսլանտիոյ աշխարհացոյցին հետ : Անոր Իսլանտիոյ վրայ գրած յօդուածները շատ կը փնտռուին տարիներէ հետէ, եւ ինք հեղինակութիւն կը ձանջուի Իսլանտիոյ ներքին մասերուն համար : Տասնըհինգ տարիներուն մէջ զորոնք անցուց Իսլանտիան խուզարկելով, այցելեց անոր ամէն խորշերը ու ծակերը : հարիւրաւոր լավայի դաշտեր եւ սառնարաններ գտաւ, եւ ծովեզրի երկայնութեամբ բոլոր ցցուած եւ ներս մտած մասերը քննեց, եւ պինդ պազայթ պարունակող ձորերուն մէջ խոր լիճեր գտաւ : Լիճերէն մէկը ծովուն մակերեսէն 100 ոտք բարձր է, եւ անոր յատակը ծովուն մակերեսէն 273 ոտք ցած է : Այդ տասնըհինգ տարիներուն մէջ 8,000 մղոնէ աւելի ճամբորդած է աւազուա հարթ անապատներուն մէջ : Զարմանալի չէ որ Իսլանտիոյ ներքին մասերուն խուզարկութիւնը թողուած է այսքան ժամանակէ ի վեր, վասն զի խուզարկութեան դաշտը այնքան փոքր էր եւ հեռու որ խուզարկիչները խորհեցան թէ աւելի խոշոր դաճնիներ պիտի խլէին աշխարհիս միւս կողմերուն մէջ որոնց աւելի կը հետաքրքրուէր հանրութիւնը : Իսլանտիոյ մէջ ճամբորդութիւնը մասնաւոր դժուարութիւններ ունի : եւ պատճառն այն է որ լավայով ծածկուած ընդարձակ հողեր գուրկ են դալարիքէ, եւ Մր. Թորոտսըն յաճախ կը ստիպուէր իր ձիերուն շատ օրեր բաւող ճարակ տանիլ : Զկան, ճամբաներ, եւ առտուան եղանակը, որ միմիայն ժամանակն է ճամբորդութեան, շատ կարճ է : Շատ մը հրաբերանի լիճեր գտած է ներքին կողմերը ցիրուցան : Շատ հրաբերաններ, որ կ'օգնէին Իսլանտիոյ մակերեսը լավայով ծածկելու, ընդունարան եղած են լեռներէն իջած ջուրերուն : Շատեր տեսած են լուսնի այն լուսանկարները, որոնք կը ցուցնեն այրած ժայռեր որ խորունկ փոսեր ունին իրենց մէջ եւ բազմաթիւ հրաբերաններ : Իսլանտիոյ խուզարկիչը կը կարծէ թէ Յաթիա Եոքուլի շուրջը գտնուած երկիրը նմանութիւն մը կ'ըլլար լուսնի մակերեսին, եթէ մթնոլորտ չունենար եւ կանաչօրակ ջուրը չըլլար որ այն խոռոչներուն երկու երրորդը կը լեցնէ :

Մ. ԼՈՒՊԷ, ԳԱՂՂԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՆԸ

Մ. Էմիլ Լուպէ Գաղղիոյ Հանրապետութեան նախագահը ծնաւ Ի Մարզան, Տրոմի շրջանակին մէջ, 1838 Դեկ. 31ին : Իր կեանքի առաջին գործն եղաւ փաստաբանութիւն Մոնթէլիմարի մէջ, եւ սոյն քաղաքի քաղաքապետ ընտրուեցաւ 1870, Սեպտ. 4ին : Առաջին անգամ երեսփոխան ընտրուելով 1876ին, կամպպէթթայի երեք հարիւր վաթսուներեք պաշտպաններէն մին եղաւ : Այնուհետեւ նորէն երեսփոխան ընտրուե-

ցաւ : Այդ ժողովին մէջ մնաց մինչեւ որ Մերակուտի անդամ ընտրուեցաւ 1873ին : Յաջորդաբար կարգուեցաւ Հանրային Շինութեան նախարար Մ. Թիւառի տաղլին Դահլճին մէջ 1877-78ին, Նախարարապետ 1892ին, եւ Ներքին գործոց նախարար՝ յաջորդ Դահլճին, որուն կը նախագահէր Մ. Թիւառ, մինչեւ 1893 Յունուար : Երբ Մ. Շալմէլ Լաքուր 1896ին հրաժարեցաւ Ծերակոյտի նախագահութենէն, Մ. Լուպէ յաջորդեց անոր առանց ընդդիմութեան : Վարեց այդ նախագահութեան պաշտօնը մինչեւ որ Հանրապետութեան Նախագահ ընտրուեցաւ : Մ. Լուպէ բարձր դաստիարակութիւն ընդունած անձ մըն է, բայց կը գիտէր իր գիտութեան մասին ցոյցեր ընելէ : Իր գրատունը Գաղղիոյ մայրաքաղաքին ամենէն ճոխ գրատուններէն մին է : Սիրահար է զեղարուեստներու, եւ մանաւանդ երաժշտութեան : Գրեթէ ընկերական մարդ չկրնար կոչուիլ, վասն զի միշտ աւելի նախնադատիւ կ'ընտրէ իր ընակարանին առանձնութիւնը քան պաշտօնական կեանքի փառաւորութիւնը եւ Փարիզեան սրահներու շքեղութիւնը :

ԱՆԿԼԻՔԱՆ ԾԻՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ Բ.

(Պատ. Մ. Կ. Փափազեան, Այնթապ)
(Շար. Նախորդ Բիւտէ և Էջր)

Խորհուրդի գաղափարին մէջ էական տարրը սա է որ նիւթական բան մը (ինչպէս է ջուրը, հացը, զինին, իւղը) «Սուրբ Հոգւոյն աննիւթական չնորհաց ներքին մէկ գործառնութեան միջոց» կ'ըլլայ (Տես Քրիստոս Կրօնագիրք, էջ 449) : Խորհուրդը՝ եկեղեցիին կատարած նիւթական գործողութիւն մ'է կամ ձեւ մ'է, որուն միջոցաւ Աստուած հաւատացեալին կը չնորհէ փրկութեան պարգեւը, զոր օրինակ Մկրտութիւնը միջոց է ի մեղաց սրբութեան, եւ Հաղորդութիւնը միջոց է Քրիստոսի հետ հաղորդակցութեան : Երկու եկեղեցիին միջեւ բաժանման կէտը շուսաբանելու համար, այս երկուքը օրինակ առնենք :

Ահա Լուսաւորչական եկեղեցիին վարդապետութիւնը : Ինչ է Մկրտութիւնը : Մկրտութիւնն է սրբաբար խորհուրդ եկեղեցւոյ, ի նախաձեռնողաց սերեալ մեղքէ սրբուելու, եւ ի Սուրբ Հոգւոյն հոգեւոր սուրբ եւ նորոգ կեանքով մը՝ վերստին ծնանելու համար (Քրիստոս Կրօնագիրք, էջ 450) : Ուստի Մկրտութիւնը կրկին օրհնութեան միջնորդը կամ միջոցն է, նախ Սկզբնական Մեղքի դատապարտութենէն ազատուիլ, եւ երկրորդ Սուրբ Հոգիէն նոր եւ հոգեւոր կենդանութեամբ ծնանիլ : Ուրեմն, երախայ կամ ոչ-երախայ, երբ մարդ մը կը մկրտուի, (կամ իւր հաւատքով կամ իւր ծնողացը հաւատքով, բայց ճշդ մկրտած ըլլալով շնորհիւ) նախ՝ աղատ կ'արձակուի Աղամային բնութեան պատիժէն, եւ ապա՝ Սուրբ Հոգիէն կը ծնանի եւ Աստուծոյ որդեգիր կ'ըլլայ : Եւ Մկրտութիւնը էական պայմանն է փրկութեան : Հարկաւ, «վասն որոյ անձ մը պիտի փրկուին՝ որք յանուն Տեսնն Յիսուսի կը մկրտուին ի թողութիւն մեղաց եւ ի նորոգութիւն կենաց յաւիտենից» (Քրիստոս Կրօնագիրք, էջ 452) : Հետեւաբար չմկրտուած երախաները, եթէ մեռնին, զժոխք կ'երթան : Նոյն պատճառաւ ալ զատ զերեզմանատան մէջ կը թաղուին : — Հաղորդութիւնը ինչ է : «Հաղորդութիւնն է Ս. Խորհուրդ եկեղեցւոյ . . . որով ընդ տեսա կօք հացի եւ զինւոյ՝ կը հաղորդուի մեղքիսկապէս մարմնոյ եւ արեանի

Քրիստոսի» (Քրիստոս Կրօնագիրք, էջ 479) : Երբ քահանան «Այս է մարմին իմ» եւ «Այս է արիւն իմ» բառերը կ'արտասանէ, հացը եւ զինին Քրիստոսի իսկական մարմնոյն եւ արեանը կը փոխուին, մեր Փրկչին խաչին վրայ մատուցած զոհը կը կրկնուի, եւ արդէն այդ մտօք է որ Պատարագ կ'ըսուի : Նուիրագործուած հացը ուտելով հաւատացեալը Յիսուսի մարմնը կ'ուտէ, եւ զինին ըմպելով Յիսուսի նիւթական արեանը հաղորդ կ'ըլլայ : Եւ այս գործը էական պայմանն է հոգւոյն փրկութեան : Ապա թէ ոչ, ինչո՞ւ մահամերձ հիւանդին հաղորդութիւն կը տրուի : Օրինակներ բազմապատկելու հարկ չկայ : Լուս. եկեղեցին կը վարդապետէ թէ այսինչ նիւթական գործողութիւնները Աստուած պայման դրած է եւ միջոց ընտրած է հոգեւոր փրկութեան :

Ահա Բողոքական եկեղեցւոյն վարդապետութիւնը : Խորհուրդի իմաստով՝ եկեղեցիին մէջ արարողութիւն չկայ : Եկեղեցին՝ Քրիստոսէ սահմանեալ արարողութիւններ ունի, որոնք թէ՛ հարկաւոր թէ՛ սուրբ են, բայց հոգւոյն փրկութեան իրրեւ պայման դրուած չեն : Փրկութիւնը կը նշանակէ մեղաց թողութեան եւ սրտի նորոգութեան արժանանալ : Բայց այս կրկնապատիկ չնորհը Աստուած անմիջապէս կերպիւ, եւ Հոգւոյն Սրբոյ ուղղակի ներգործութեամբ կը պարգեւէ : Փրկութեան պայմանը, միակ պայմանը, Քրիստոսի անձնատուր ըլլալն է, որ կը կոչուի հաւատք : Եկեղեցւոյն երկու արարողութիւնները փրկութեան պայմանը կամ միջոցը չեն, այլ փրկութեան լոկ նշանակը եւ կնիքն են : զանոնք կը կատարենք, ոչ որքե՞ն զփրկուինք, այլ ինչո՞ւ զփրկուած ենք : Զոր օրինակ, Մկրտութիւնը՝ հաւատացեալը Աստուծոյ դաւակ չկայցուցանի, այլ իբրեւ Աստուծոյ դաւակ կը ծանուցանէ, մարմնոյն ի ջրոյ ծնանելովը չէ որ հոգին ի Սուրբ Հոգւոյն կը ծնանի, այլ մարմնը ի ջրոյ կը ծնանի քան զհոգին արդէն հաւատքով ծնած է ի Սուրբ Հոգւոյն : Մկրտութեան չնորհիւ՝ ոչ թէ արքայութիւն կը մըտնենք, այլ զՔրիստոս իբրեւ Փրկիչ կը դաւանինք : Նոյնպէս Հաղորդութիւնը՝ Քրիստոսի հաղորդակից ըլլալու պայմանը կամ միջոցը չէ, այլ լոկ նշանակը կամ կնիքն է : ոչ թէ հաղորդուելով կը միանանք Քրիստոսի, այլ կը հաղորդուինք քան զարդէն իսկ միացած ենք Քրիստոսի :

Համառօտիւ, մէկ եկեղեցիին կը դաւանի թէ մարդ այսինչ նիւթական արարողութեանց պայմանաւ կամ միջոցաւ կը փրկուի, իսկ միւսը կը դաւանի թէ մարդ առանց ոտէ արարողութեան կը փրկուի : Թող զիտուի որ տարբերութիւնը խորհուրդներու թուոյն մասին չէ, այսինքն ոչ թէ մէկը եթէ խորհուրդ կ'ընդունի, իսկ միւսը երկուք միայն կը դաւանի, այլ սա է որ Լուս. եկեղեցին խորհուրդի կը հաւատայ, իսկ Բող. եկեղեցին խորհուրդի բնաւ չհաւատար : «Խորհուրդը ըսուածը չկայ, անկարելի է,» կ'ըսէ Բողոքականութիւնը :

Ահա երկու եկեղեցիներուն միջեւ հիմնական տարբերութիւնը, որ գրեթէ անուսն է : Անոնք՝ փրկութեան պայմանը եւ միջոցը, Քրիստոսի քաւարար պատարագին բնութիւնը, Սուրբ Հոգւոյն ներգործութեան եւ զանակը, վերջապէս Ա. Ե. Բ. Ե. Բ տարբեր կերպով կ'ըմբռնեն : Այս երկու տեսութիւններէ մ'ըր աւետարանական է, ատոր վրայ հիմն չենք վիճիլ, այդ խնդիրը ամէն ուշիմ ընթերցողի խզճին եւ բանականութեանը կը

յանձնենք : Մեր այժմու նպատակն է դանոնք զանազանել միայն, եւ ցուցնել թէ ուր որ դաւանանքի, համոզումի եւ ըմբռնումի այսքան անեղ տարբերութիւն կայ, եկեղեցական միութիւն անկարելի անկարելի է : Զորս հարիւր տարի յառաջ Լուսեր Հոգւմէականութեան դէմ ելաւ եւ ըսաւ թէ «Խորհուրդը փրկութեան հետ գործ չունի, մարդ հաւատքով կը փրկուի :» Եւ այն ժամանակ Բողոքականութիւնը ծնաւ : Յիսուսն տարի յառաջ մեր մէջ ծագած խնդիրը դարձեալ նոյնն էր : Իրաւ մեր հայրերը՝ պատկերի, մոմի, խուսկի եւ իւղի վրայ, ծէսի եւ արարողութեան վրայ շատ վիճաբանեցան, բայց այդ ամէնը՝ ճիշդ հիմնական Անկիւքան յուզման նման, երկրորդական բան մ'էր : Յայնժամ, որպէս նաեւ այժմ, խնդիրը սա կէտին վրայ կը դառնար թէ խորհուրդը (Եկեղեցական իմաստով)՝ փրկութեան էականն է թէ ոչ : Յորչափ Լուս. եկեղեցին «էական» է կը պատասխանէ, եւ յորչափ կը սնդէ թէ իւր այս ըմբռնումը անսխալական եւ անսասան է, Հայ Բողոքականը ստիպուած է իւր անջատ գոյութիւնը պահելու :

Ուրեմն, Հայ Բողոքականը անխրաւարար չդատապարտենք : Թող լաւ հասկցուի որ խուսկը մեղ ալ անուշահոտ է, շարականներէն ումանց մենք ալ սիրահար ենք, շապիկ հագնելու չենք առարկիր, խաչակնքելը մեղք չէ, աղօթարքի գործածութիւնը պատուական է : Բայց այս ամէնը ընդունելով եւ կատարելով հանդերձ, մենք դարձեալ Բողոքական կը մնանք, յորչափ Լուս. եկեղեցին իւր վարդապետութիւնը անփոփոխ պահէ : Քանզի ծէսը եւ արարողութիւնը չէ որ զմեզ կը բաժնէ, այլ կրօնական համոզումն է որ կ'անջրպետէ :

Վերջին խօսք մ'ալ : Բիւզանդիան յայտնապէս կ'ուրախանայ Անկիւքանաց Ծիսական Շարժման վրայ, կարծելով թէ սա պիտի տկարացունէ Բողոքականութեան դատը Հայոց մէջ, Բայց արդեօք կը յիշէ որ Լուս. եկեղեցիին գոյութեանը սպառնացող վտանգը «անձէս» Բող. եկեղեցիէն չգար, մի ուրիշ կողմէ կու գայ, այդ «ծիսական» կոչուած եկեղեցիներէն կու գայ : Կովկասի մէջ Ռուսական եկեղեցիին այսօր ըրածները կը տեսնենք եւ կ'ողբանք : Եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցին՝ Արեւմտեան Պապական եւ կեղեցիին դնոյնն է :

ՎԱՆԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԸ

Ա. Ե. Բ. Ե. Բ ընթերցողները կը յիշեն թէ անոր 1897 տարուան 18 թուոյն մէջ «Ամերիկեան Որբանոցն ի Վան» մակադրով յօդուած մը կար : Որովհետեւ ցարդ յիշեալ որբանոցն իսկաւ շատ փոփոխութիւններ կրած է եւ այժմ շատերու մտքեր որբանոցաց շուրջ կը դառնան, աւելորդ չպիտի լինի որ լրագրաց սիւնակներ մերթ ընդ մերթ տեղ տան այս շահեկան նիւթին :

Քաղաքիս Ամերիկեան Որբանոցը, որ 2 1/2 տարիէ ի վեր հիմնուած է, այժմ 400ի չափ որբեր ունի, որոցմէ 250ը՝ մանչ, իսկ մնացեալքն աղջիկ են՝ զաւ դատ բաժիններով : Որբերէն 33ը շատ փոքր ըլլալով զատ տեղ մը կը պահուին յատուկ մայրապետի մը հոգւորութեան ներքեւ : Աղջիկներէն 75ը՝ աղջկանց դպրոցին մէջ, իսկ մնացեալքն կը կենան միսիոնարաց շրջանակէն դուրս եղող մօտակայ շէնքի մը մէջ, որ վարձուած է Այնթապէ զրկուած ստակով եւ ուստի այդ որբանոցն «Այնթապ. Սիոփ» կը կոչուի :

250 տղաները վեց կարգերու բաժնուած

են, որոցմէ մինը վերջերս կազմուեցաւ : Թէեւ տեղի անձկութեան պատճառաւ բուն որբանոցիս մէջ չեն կենար, բայց դարձեալ անոր մասն կը կազմեն, իւրաքանչիւրն 40 հոգիէ բաղկացած : Ունին իրենց յատուկ կարգապետներ եւ օգնականներ եւ ամէն կարգ չորս բաժին ունի, իւրաքանչիւրը 10 հոգիէ բաղկացած եւ ամէն բաժինն իւր տասնասպետն ունենալով :

Որբանոցիս շէնքերէն մաս մը նոր շինուեցաւ, իսկ մաս մըն ալ արդէն կային եւ նորոգուելով որբանոցի յատկացուեցան :

Որբանոցս ունի նոյն շրջանակին մէջ իրեն յատուկ փուռ մը եւ փուռին կից կայ բազմիք մը, որոց երկաշէնայ մեծ կաթսան փուռէն վառուելով կը տաքնայ եւ այն կերպով տարին քոսան լիբայէ աւելի խնայողութիւն մը կը լինի : Այս նոյն որբանոցի անօրէն Տր. Ռէյնոլտսի խնայողութեան մտքին ծնունդն է :

Որբանոցս իրեն կից ունի նաեւ երկու հիւանդանոցներ տղայոց եւ աղջկանց, ուր կը հոգացուին հիւանդներ կին հոգատարի մը ձեռքով, ըստ բաւականին լաւ կերպով : Թեւեւ աւելորդ չպիտի լինի ըսել թէ քան որբանոցս միայն չորս մեռեալ ունեցեր է ցարդ, երկուքն մանչ, երկուքն աղջիկ :

Որբանոցս ունի նաեւ 103 հատ ոչխար եւ այծ, որք ամառները եւ ձմեռները կ'արածուին Սալնապատու Սբ. Գրիգորայ վանքի արօտալայրին մէջ, ծախքը վճարուելով : Այսպէս որբերը ամբողջ ամառ առատ կաթնեղէն կը վայելին որ, ըստ անցեալ տարուան հաշուոյ, կտրիկ շահ մը կ'արտադրէ դարձեալ :

Որբերուն տարեկան ծախքն է ամէն մէկին միջին հաշուով հինգ լիրա, այսինքն տարեկան 2,000 լիրա : Հոս գրեթէ ամէն տղայ ուսում եւ արհեստ կ'ուսանի միանգամայն : Նոր շրջանէն սկսեալ որբերէն 70ը փոխադրուեցան բուն դպրոցը, ուր արդէն սկիզբէն 30 հոգիի չափ ըստ բաւականին զարգացեալ տղաներ կ'ուսանէին, որոնք ցերեկօթիկ աշակերտաց հետ կ'ուսանին հաւասարապէս : Ասոնք ըզրորն այնպէս յարմարեալ են իրենց կարգերուն մէջ, որ այս տարուան սկսեալ շարունակաբար ամէն տարի դպրոցս որբերէն ընթացաւարտներ պիտի ունենայ : Դպրոցիս առաջին շրջանին մէջ տեղի ունեցած ամսական քննութեանց միջին նիշերու բարձրագոյնները որբերուն կը պատկանէին :

Որբեր երկու մասի բաժնուած են, որոց կէսն առաւօտէն մինչեւ կէսօր իրենց դասերուն կը պարապին եւ կէսօրէն յետոյ արհեստի կ'երթան եւ փոխադարձաբար : Արհեստներն են դերձակութիւն, Նւրպական եւ տեղային կոշիկակարութիւն, ոստայնանկութիւն, խաղախորդութիւն, հիւսնութիւն, դարբնութիւն (չլինկիլիք), որուն հետ կ'ուսանին նաեւ պղնձագործութիւն, թիթեղագործութիւն եւ ամաններ անագել : Եւ հացագործութիւն :

Շաբաթուան մէջ չորս օրեր բազմիքը տղայոց յատկացուած է լրւայքի եւ լրգանքի համար, իսկ մնացեալ երկու օրերն աղջկանց նոյն դրոճերու համար :

Հոս արդոյ ընթերցողի երեւակայութեան կը ներկայացնեմ նոցա զբօսատեղին, որ մեծ բակ մըն է, ուր Ծննդեան տասնհինգօրեայ վազանցի աթիւն ամենայն ինչ հոգի առած կ'երեւի, զինոքս կ'եռան կը կայտան զուարթ գառներու եւ ուրբու պէս : Ոմանք սառնին վրայ կը սանին մեծ յաջողակութեամբ արհամարհելով օգին խստութիւնը որ իրենց այտերը համակ կարմիր ներկեր է : Ոմանք

այլեւայլ խողեր կը խաղան, ոմանք ալ, անշուշտ խելահասները, խուճերու բաժնուած, մերթ ուրախ եւ մերթ տխուր յիշատակաց քաղաւածներ կ'ընեն : Բայց ամենէն ուշադրաւն այս է թէ, այն դիւրացի տղաները որոց բերաններ հայնոյութեան, ստախոսութեան եւ երգման վարժուած էին, այժմ բաց ի «կղզալը» բառէն, ոչինչ չեն արտայայտեր : Ահա ուշի ուշով նոցա գէմքերուն նայողը ուրախութիւն մարմնացեալ պիտի տեսնէ անոնց վրայ : Բողոքն ալ կայտառ, գէր ու երջանիկ են, թէպէտ անոնցմէ ոմանք այն ուրախ երեւոյթին տակ տխուր սրտեր կրելով :

Մտնանք նոցա արհեստանոցները ուր անձնուր ոք իրեն յատուկ տեղն ուստած փոյթեռանդ կերպով կ'աշխատի անդադար, եւ յաջողած ատեն մանկական միամտութեամբ ուրախ բացազանջութիւնով մը վարպետին ուշադրութիւնը կը հրաւիրէ գործին վրայ : Հոս կարեւոր է յիշել թէ տղաներէն շատերն ըստ բաւականին զարգացած են իրենց արհեստներուն մէջ : Մասնաւորաբար կոշիկակարի եւ ոստայնանկի արհեստաւորներէն քանիններն այնպէս են որ, ինչպէս իրենց վարպետները կը վկայեն, եւ ինչպէս որ ակնատես եղած ենք, երբ որբանոցէս դուրս ելին, իբր ինքնազուլ արհեստաւորներ կամ գէթ իբր վարպետի մը օգնականներ (զալթա) պիտի կրնան աշխատիլ եւ իրենց ապրուստն հոգալ :

Այս ամենի հետ բաւականին մաքրասիրութիւն, կարգապահութիւն եւ հնազանդութիւն կը փայլի իրենց դասամիջոցի, նիստ ու կացի, ուտելու, խմելու, սերտողութեան ատեն : Որբերը օրը երեք անգամ կը ճաշեն, այսինքն առաւօտ եւ կէսօր միշտ հացի հետ կերակուր մը (մսեղէն կամ իւղային, եւ միրգի ատեն յաճախ միրգ) իսկ իրիկուններ թարմ հաց : Երեկոյեան ճաշէն քիչ յետոյ սերտողութեան կ'երթան, որ երկու դասարանայ մէջ տեղի կ'ունենայ ժամ ու կիսու չափ : Յետոյ աղօթք կը լինի եւ անկէ վերջ ամէն կարգ իր ննջարանն կը վազէ, ուր արդէն իրենցմէ որոշուած տղաները անկողիններ պատրաստած են, որոնք իրենց «առ յեռ» կ'երեկոյեան տառնձնակուն աղօթքն ընելէն վերջ կը սրտակին, ուր արդէն մոտցայ ըսելու որ տասն տարեկանէն վար եղող տղաները հանգիստ քուն կը քաշեն : Ամէն կարգապետ ալ իր կարգին քովիկ պատին վրայ շինուած մահճակալին վրայ կը պառկի գիշերապահի հսկողութեան ներքեւ, որ ամբողջ գիշեր լապտեր ի ձեռին ննջարանները կ'այցելէ պէտք եղած խնամքն տանելու համար :

Նոյն կարգն ու կանոնը կը տիրէ նաեւ առաւօտեան զարթօնքի ատեն : Հինգ հոգիէ բաղկացեալ երաժշտական խումբ մը ննջարանները այցելելով սրինգի ձայնակցութեամբ Ներսէսեան հրաշակերտները կ'երգէ, այն է «Առաւօտ լուսոյ եւ Զարթիք փառք իմ» Պէտք է ըսել թէ երբեմն յատուկ ուսուցչէ մը մեր Աղլ. եկեղեցական շարականներն ալ կ'ուսանին ոմանք եւ հանդիսաւոր եւ տօն օրեր ժողովարանի մէջ կ'երգեն : Արդէն ամէն շաբաթ օր եւ տօն օրեր իրենց կարգապետներուն առաջնորդութեամբ Աղլ. եկեղեցի կ'առաջնորդուին :

Պատ. Միսիոնարի Ծննդեան երեկոյին ըստ մեր տոհմային սովորութեան զգուճէ մեծ շաղտեր մը առած նորս տունը գացին, ուր էին նաեւ Անգլիոյ հիւպատոսը եւ Գերմանացի հնախոյը կրկու հիւրեր : Պատ. Տր. Լէյման եւ Տր. Պէլք : Հոն երգեցին մերնահապետական «Ծննդեան ալելուիան», իսկ առաւօտուն զարձեալ նորս տանը շուրջ հա-

ւաքուած «Ահա մեզի մանուկ ծնաւ» երգն երգեցին, յետ անու իրենց սեղանի երգի վերջին մասն «Կեցցեն, միշտ կեցցեն քոչկենք միաձայն, կեցցեն բարերարք, կեցցեն յաւիտեան, կեցցէ միշտ հայրիկն եւ մեր բարեջան», ծափերով թնտացրինով օղբ : Դարձեալ նոր տարուոյ առաւօտուն իրենց հօրը Տր. Ռէյնոլտսին (ինչպէս յաճախ սովոր են կոչել) տանը շուրջ հաւաքուած Որբանոցիս յատուկ երգն երգեցին : Յետ այնորիկ գիշերօթիկապետներէն մին որբերու կողմանէ հետեւեալն արտասանեց. «Ձեր սիրեցեալ որբերը եկած են այս բարենշան պահուն իրենց օրդիական համբոյրներ ձեռնով ձերք առատախնամ ձեռքերուն՝ շնորհաւորել Ձեր հայրութեան նոր տարին, եւ այս աթիւն Ձեր առջեւ կը թափեն իրենց երախտագիտութիւնները եւ շնորհակալութիւնքը, ու կը խնդրեն Ձեր աղօթքն ու օրհնութիւնը» Պատ. Միսիոնարն դողդոջուն ձայնով մը սա խօսքերը խօսեցաւ. «Սիրելի աղաքս, կ'աղօթեմ ձեզ համար որ 1899 թուականը ձեզի օղտակար լինի ամէն կողմանէ, կ'աղօթեմ ձեր անձին առողջութեան համար, կ'աղօթեմ որ թէ դասերնուդ եւ թէ արհեստներնուդ մէջ յաջողութիւն դանէք : Կը մաղթեմ որ դուք առաքինի եւ բարոյական կեանքի տէր տղաներ լինիք, ինչպէս որ ձեր մէջն այս փափաքն կը տեսնամ : Տղայք, դուք էք իմ ուրախութիւնս : Այս գուարթ առաւօտ որ դուք ուրախութեամբ եկած էք շնորհաւորել մեր նոր տարին, շատ ուրախ եմ եւ շնորհակալ : Երթաք բարեւալ :»

Ծնունդի աթիւն ալ սրենքէն կախուած էին թաշկինակներ, որոնց մէջ լեցուած էր իրենց կազանդէքը (հոս կարեւոր է ըսել թէ բուն կազանդի իրիկուն տղայոց բաները պատրաստ չլինելուն համար կազանդէքի բաշխումը Ծննդեան իրիկուն ձուլուեցաւ : Իսկ բուն կազանդի իրիկունը մոզական լապտեր ցուցուեցաւ) ինչպէս նաեւ իբրեւ Ծննդեան նուէր ձեռնոցներ, զոր Պատ. Տր. Ռէյնոլտս կը նուիրէր իր աղային : Ամէն աղայի երեսին վրայ փայտներ կը շողային : Սրան ուրախութեամբ ողբերուած էր : Երջանիկ որբեր : Հանդէսն Սբ. Գրոց ընթերցումով եւ աղօթքով սկսեց : Քանի մը ճառեր, զոցեր եւ երգեր աղայոց եւ աղջկանց կողմէն եւ քանի մը տեղային պարեր : Յետոյ բաժնուեցան կազանդէքները, որոնցմէ շատերն հեռաւոր երկիրներէ եկած էին բարերարներէ : Այսինքն փոքրերուն համար պաակերներ եւ խաղալիկներ, մեծերուն համար գմբխներ 84ի չափ, որոնցմէ շատ բան ինքն Պատուելին ընծայած էր : Իսկ աղջկանց քանիններուն շրջազեւատի եւ գործոցի համար գեղեցիկ ատօքներ, զրպանի երգարաններ, աւելի փոքրերուն գոյնզգոյն տապակներ, ասեղներով եւ ասեղամաններով մէկտեղ են :

Իսկ Տր. Լէյման եւ Տր. Պէլք բուն իրենց բարերարեալներն գրկած, կը խօսէին եւ ընծաներ կուտային :

Սրտաշարժ է տեսնել, մանաւանդ վերջին մի քանի օրերուն մէջ, խուճա խուճա տղաներ, որք Պատուելին տունը շրջապատած, իրենց բարերարաց անուններն կը հարցնեն մէկիկ մէկիկ նորս սենեակն մտնալով : Երբ նա թուղթին վրայ գրելով անունը՝ աղային ձեռքը կու տայ, աղան վաղելով եւ թուղթով իւր ընկերներուն ցուցնելէ յետոյ թուղթ ու գրիչ առած իւր սրտի զղացուցիկները թուղթին կը յանձնէ : Յետոյ կարող մէկի մը կու տայ զայն Անգլիերէնի փոխելու համար : Այսպէս ամէնքն ալ անձկանօք կը փափաքին իրենց բարերարաց հետ թղթակցիլ :

Տէրն օրհնէ մարգասէր բարերարներ եւ վարձահատոյց ըլլայ անոնց :

Վան ԱՐԵՅ Գ. ԼԻՍԵԱՆ
Յունի. 30, 1899

Երիտասարդաց կիրակնօրեայ աղօթքի ժողովը կը սկսի ժամը 9ին (Ը. Թ.) Պայպլը Հաուսի մատրան մէջ : Խորհրդածութեան նիւթն է Հոովմ. Ը. 18 համարը :

ՀԱՆԴԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ Սէլամըզի արարողութիւնէն ետեւ Անգղիական դեսպան Սըր Նիքոլայ Օքսնըր պատիւ ունեցաւ ոչ-պաշտօնապէս ներկայանալու Ն. Կ. Վեհափառութեան :

Նոյն օր Սէլամըզի արարողութիւնէն ետեւ Ամերիկեան դեսպանն Ամերիկեան Ներքին գործերու նախարար Տր. Հիչքոքի կնոջ եւ դստեր ընկերակցութեամբ Վեհ. Սուլթանէն հրաւիրուեցաւ այցելել Երբազը կայս. գրաստանը եւ յախճապահեղինաց գործարանը :

Հակառակ Վեհ. Սուլթանին բաղձանաց, որ է յառաջ տանիլ Օսմ. պետութեան ամէն կարգի մարդոց բարօրութիւնը եւ նայիլ որ իր հպատակները խաղաղութեամբ եւ ներդաշնակութեամբ ապրին իրարու հետ՝ առանց բացառութեան վայելելով արդարութեան բարիքները, օտար կարգ մը թերթեր զանազան ոչ-բարեկամական գիտողութիւններով այնպէս կը ներկայացնեն թէ Ռուսիոյ ժողովուրդներն իրարու նկատմամբ թշնամական ոգիով տոգորուած են :

Անցեալ շաբթու Ն. Կ. Վեհափառութեան կողմէ Մեծ Եղարքոսին հաղորդուած նոր հրամանագիր մը կը պատուիրէ խստիւ գործադրել օրէնքները : Հրամանագրին բովանդակութիւնը Եղարքոսական գրով մը հաղորդուեցաւ Երբազը, Սանկայի, Գոսովայի, Մանասթըրի եւ Սէղանի կուսակալութիւններուն : Վեհապետին այս նոր հրամաններուն համաձայն կուսակալներն ստէպ պառոյաներ պիտի ընեն իրենց գաւառներուն մէջ որպէս զի թոյլ չտան որ ուրիշ միջազգայ պատահի : Օրինական ձեւակերպութիւններով պիտի պատժեն ամեն նախորդ յանցանքներ գործողները եւ Մահմետականներու եւ ոչ-Մահմետականներու պիտի զգացնեն թէ կայս. կառավարութիւնը սիրալիր եւ հայրական զգացումներ ունի ամենուն համար, որոնք ամէնը միեւնոյն հայրենիքին զաւակներն ըլլալով իրարու հետ ապրելու են կատարեալ խաղաղութեամբ, հաւատարիմ ու հնազանդ ըլլալով կառավարութեան :

Իսկ ով որ հակառակ ընթացքի հետեւելով խռովութիւն յարուցանէ՝ պիտի պատժուի օրինաց բոլոր խտուրտութեամբ :

Վեհ. Սուլթանին բժիշկներէն Իսմէթ փաշա շաբաթ օր մեռաւ կարճատեւ հիւանդութիւնէ մը ետեւ, եւ կայս. անձնական գանձուն ծախքով թաղուեցաւ Եսկես էֆ. Թէքէթին մէջ, ուր կը գտնուի անոր ընտանեկան դամբարանը :

Գերմանական դեսպան Պատոն Մարշալ Բ. Դոնէն խնդրեց պատուիրակներ կարգել միջազգային բժշկական համաժողովի մը համար որ Մայիսին պիտի գումարի Պերլինի մէջ :

Աւստրիոյ Սթէֆանի իշխանուհին, այրի հանգուցեալ Ռուտտլի իշխանին, վերջերս այցելեց Եսկեսայի ծովափերը : Այդ առիթով զաւառին կուսակալ Օսման փաշա անձամբ գնաց ընդունիլ զայն ի Սէրասուս, Փրէվէզայի մէջ ալ գնաց ողջերթ մաղթել երբ իշխանուհին նաւ մտաւ Քորֆու երթալու համար :

Գոսով լրագիրը կը գանգաւի թէ Սօֆիայի թերթերէն սմանք ամբողջովին սուտ յօդուածներ կը հրատարակեն զաւառին կացութեան վրայ, չափազանցելով եւ սխալ ներկայացնելով այնպիսի սովորական գէպքեր որ ամէն օր կրնան պատահիլ աշխարհիս ամէն կողմը : Կը յարէ թէ Վեհ. Սուլթանին հօր պաշտպանութեան ներքեւ անգործութիւնը

կատարեալ է գաւառին մէջ եւ ամէն ոք իր գործերով եւ առօրեայ աշխատութեամբ կը զբաղի :

Սմոյս 4 թուով Սօֆիայէ կը հեռագրուի թէ Պուլկարիոյ իշխանը երկար տեսակցութիւն մը ունեցած է Մ. Փեթրովի հետ, որու արդիւնքն եղաւ կատարեալ համաձայնութիւն մը Սթամպուլի կուսակալութեան անգամներուն հետ :

Իգրոս կ'ըսէ թէ Միթիկանեան Տիգրան էֆ. ի առջարկը, որ էր խնայողական սընտուկ մը հաստատել Պոլսոյ խանութներուն բոլոր վաճառումներէն 5 առ հարիւր տուրք մը առնելով, մերժուեցաւ նկատելով որ նոր դժուարութիւններու պիտի ենթարկէ վաճառականութիւնը եւ պիտի պատճառէ դնեւրու ընդհանուր բարձրացում :

Կարգ մը գիմուսներ եղած են Փարիզի 1900ի ցուցահանդէսին Օսմ. բաժնին շինութեան արտօնութիւնն ստանալու համար : Այս գործին վերաբերեալ խնդիրներու վերին հոգը եւ հսկողութիւնը Փարիզի Օսմ. դեսպան Միւնիք պէյի յանձնուած է : Խնդրարկուներէն մին կը խոստանայ գումար մը վճարել Համադրային Անկերանոցին, ուրիշ մը կը ցուցնէ թէ ինչպէս կայս. կառավարութիւնը կրնայ 20,000 ոսկու շահ մը ձեռք բերել իրեն յանձնուելի այդ գործը :

Մէրսինի դրամաճի (մաքանա) գործարանին արտադրութիւնները ներքին մաքսէ զերծ կացուցանելու առաջարկին առիթով տարազգործութիւններու ներքին մաքսն ամբողջովին ջնջելու խնդիրն յուղուեցաւ : Մաքսային վերատեսչութիւնն այդ տուրքերուն բարձման գաղափարին նպաստաւոր չէ : Բայց միեւնոյն ժամանակ ներքին տարազգործութիւնները քաջակերելու համար կարծես հարկ է որ անոնք զերծ կացուցուին տուրքէ մը, որ անոնց կը դժուարացնէ մրցիլ օտար երկրի նմանօրինակ տարազգործութիւններուն հետ : Խնդիրն անտարակոյս արժանի է խորին ուսումնասիրութեան :

Մին այն խնդիրներէն որոնցմով կը զբաղի Հանրօգուտ գործերու նախարարութիւնը Վոսիորի վրայ կրողիւսի (չիմէնթօ) գործարաններ հաստատելու խնդիրն է, որու նպատակն է մայրաքաղաքիս պէտքն հոգալ փոխան օտար այն վաճառականներուն որ ամէն տարի մեծ քանակութեամբ կրողիւս կը բերեն Եւրոպայէ : Կը կարծուի թէ կրողիւս կրնայ շինուիլ ի Քիլիք-ճուլիսու (Վոսիոր) օտար կրողիւսի գնոյն մէկ հինգերորդով :

Այտրնի Սոքա գաւառակին մէջ վերջերս գտնուած զմռնխտեան հանք մը (զըմփարա) շահագործելու արտօնութիւն տրուած է :

Թերթ մը առաջարկեց իրբեւ հասոյթի նոր աղբիւր հինգ դահի տուրք մը հաստատել զատարանները ներկայացուած փոխանորդագրերու վրայ : Դատական նախարարութիւնը ձեռնարկեց առաջարկին ուսումնասիրութեան : Առաջարկուած է նաեւ ուրիշ թուղթերէ ալ գանձել արձանագրութեան հինգ դահի տուրքը, որ կ'առնուի Դատական նախարարութեան մատուցուած աղբիւսագրերուն համար :

Մովային հրամանատար Սամի փաշա մայրաքաղաքիս նաւահանգստին վերատեսուչ կարողուցաւ փոխան Համալի փաշայի որ Պասրայի կուսակալ անուանուեցաւ :

Մեքքէ գացող Մահմետական ուխտաւորներն սկսած են հաւաքուիլ աշխարհի ամէն կողմերէն : Անցեալ շաբթու հարիւրաւորներ զրկուեցան գանազան շոգենաւերով : Այս շաբթուան համար ուրիշ շոգենաւեր կը պատրաստուին : Մահմուտէի Ղազլ շոգենաւան ալ,

որ վերջերս գնուեցաւ Անգղիայէ եւ երկտարական լուսով կը լուսաւորուի, կը պատրաստուի ուխտաւորներ տանելու : Մեքքէ ժամանած ուխտաւորները, քաղաքը մանկէ առաջ, դուրսը վրաններու տակ քառակուսի կ'ենթարկուին :

Չինուորական հաստատութիւններու ի նպաստ գաւառներէ հասած նոր գումարներ այդ հանգանակութեան համազուտարը 75,692,400 դահի բարձրացուցին :

Յոյն սեղանաւոր Մ. Անարէա Սինկրոս որ Աթենքի մէջ մեռաւ կտակով կը թողու Յունաց պատրիարքարանին 15,000 ոսկի իրբեւ պահեստի գումար, Յունաց Եփեսոսի թարեւրական հաստատութիւններուն 15,000, Յունաց Ֆէնէրի ազգային զգրոցին 5,000, դարձեալ նոյն տեղւոյ ազգային Յունական դպրոցներուն 25,000 : Դարձեալ, 15,000 ոսկի կը թողու Կ. պոլսոյ մէջ որբանոց մը հիմնելու, 5,000 ալ իր ծննդավայրին, Քիոսի Լիթի գիւղին, մէջ վարժարան մը բանալու եւ պահպանելու :

Եգիպտոսի Խտիլի իր նորածին որդւոյն ծննդեան առիթով շնորհաւորութիւններ ընդունեցաւ Մեծ Բրիտանիոյ Թագուհիէն եւ Իտալիոյ Թագաւորէն :

Սուտանի Աթպարա գետին վրայ ձգուած կամուրջին շինութիւնն աւարտեցաւ եւ երկաթուղին պիտի շարունակուի մինչեւ Խարթում քաղաքը :

Թուրք թերթեր կ'ըսեն թէ Մահմուտէի վարչութիւնը Մուտանիոյ գծին համար երկու արագընթաց շոգենաւ յանձնարարած է յԱնգղիա :

Թղթատարական եւ հեռագրական վարչութեան մասնազէտ խորհրդական եւ օդերևուծութեան հիւսիսային գլխաւորն անդամ Էմիլ Լաքուան էֆ. անցեալ չորեքշաբթի մեռաւ եւ ուրբաթ թաղուեցաւ Լաւինաց Ֆէրիքէօյի գերեզմանատան մէջ : Ֆրանսական գաղթականութիւնը մեծ բազմութեամբ ներկայ եղաւ հանգուցեալին թաղման :

Եէմէն զրկուած բարեկորգման յանձնաժողովը որոշեց զպրոցներու թիւն աւելցնել այդ գաւառին մէջ : Յանձնաժողովը Բ. Դրան առաջարկած է նախապատրաստական զըզրոցներ բանալ գաւառին կարեւոր քաղաքներէն ումանց մէջ, իսկ մէյմէլ մասնաղկտական վարժարան հաստատելու Սանաայի մէջ : Աղքատներու համար ալ հիւանդանոց մը պիտի կառուցուի Սանաայի մէջ :

Ժանտախար Ճիտաէի մէջ քանի մը զոհեր ալ տարաւ : Սակայն քանի մը օրէ ի վեր ուրիշ լուր չկայ այդ քաղաքին առողջապահական վիճակին վրայ : Միեւնոյն ժամանակ տասնօրեայ քառակուսի սահմանուած է Ճիտաէէ ժամանող բոլոր նաւերուն դէմ, եւ միջոցներ ձեռք առնուած են թոյլ չտալու որ ախտը ծաւալի Հիմազի ներքին գաւառները :

Վանաց առաջնորդական տեղապահն անցեալ շաբթու հեռագրեց Պատրիարքարան թէ տեղւոյն կրօնախօսի Հայերն սկսած են մայրենի եկեղեցւոյ ծոցը վերադառնալ : Ուրիշ հեռագիր մը կը ծանուցանէ թէ գաւառին կարօտեալներուն թիւն հետզհետէ կը ստուարանայ : Անցեալ շաբթու Սրարկիրի առաջնորդական տեղապահը շրջաբերական նամակով մը ազդու կոչում մը ըրաւ մայրաքաղաքիս բոլոր եպիսկոպոսներուն իրենց պարտականութիւնը ճանչնալ հանդէպ Վանայ եւ գաւառին կրօնախօսական շարժման եւ օգնութեան փութալ նիւթական ու հոգեւոր մեծ կարօտութեան մէջ գտնուող խեղճ ժողովրդին : — Կիրակի Իւնիսն Ֆրանսէզի սրահին մէջ տեղի ունեցաւ Աղղ. Հիւանդանոցին ի նպաստ կազմակերպուած նուազահանգէն յոյժ գոհացուցիչ յաջողութեամբ : Հասոյթն իր ութ հարիւր ոսկի կը հաշուուի : Արեւելի թղթակից մը Գերմանիայէ կը գրէ թէ այժմ ի Գերմանիա կը գտնուի Չինական եւ Հնդկաչինական երկիրներու ներքին գաւառներու աւետարանիչ Պատ. Յովհաննէս Աւետարանեան, ծննդեամբ Էրզրուցի, խո-

ընդհանուր աստուածաբան եւ հմուտ բացի Հայե-
րէնէ եւ Թուրքերէն՝ Գերմաներէն, Յրան-
սերէն, Արաբերէն եւ Ասիական ուրիշ քանի
մը լեզուներու : Իր ձեռամբ Հնդկաչինու տե-
ղային մէկ լեզուն թարգմանուած աւետա-
րանի հրատարակութեամբ մը կը դբադի, եւ
քանի մը ամիսէն ամուսնանալով պիտի վերա-
դառնայ իր աշխատութեան սիրական վայրը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սպանիա . Մ. Սակասթայի դահլիճն իր հրա-
ժարականը տուաւ եւ խնամակալ Թագուհին
ընդունելով զայն Պահպանողականներու պետ
Մ. Սիլվեստրիոս Գոմարէսը նոր նախարարութիւնը
կազմելու գործը : Մ. Սակասթայի հրաժար-
ման պատճառը սա եղաւ որ Երեւակոյտը Փի-
լիպպեանց թողումը վաւերացուց երկու քուէի
միջոց մեծամասնութեամբ, եւ այս ձեռք բեր-
ուեցաւ չնորհիւ դահլիճի երեք անդամներու
քուէին, նաեւ երկու Հանրապետականներու՝
որոնք իրենց քուէները տուին վերջին վայր-
կենին : Իբր հարիւր Երեւակոտականներ
ձեռնպահ մնացին եւ ասոնց շատերն այնպի-
սինքն են որ Զօր. Ուէյլլըրի աջակցութեամբ
Ազատական կուսակցութեան վերակազմուե-
լուն չէին հաւանաւ : Մ. Սակասթա տեսաւ թէ
նախարարութիւնը կորուսած է խորհրդա-
րանին վստահութիւնը, եւ հրաժարեցաւ :
Նոր դահլիճն մէջ Զօր. Փոլալիէա, որ յա-
ջող հանդիսացաւ Փիլիպպեանց մէջ, Պատե-
րազմական նախարար է : Նախարարու-
թիւնը լուծեց խորհրդարանը եւ ի մտոյն նոր
ընտրութիւններ պիտի կատարուին : Փի-
լիպպեանց նաւախմբին հրամանատար Մոն-
թոյո ծովակալը բանտարկուած է եւ Քու-
պայի գորաց հրամանատար Լինարէս գորա-
վարը պիտի ձերբակալուի : Սակասթայի նա-
խարարութեան անկումը հաշտութեան դաշ-
նագրին համար ձախողուած մը չէ : Նոր
խորհրդարան մը պիտի դումարուի Մայիսէն
տաջ եւ հաւանօրէն պիտի քուէարկէ այդ
դաշնագիրը : Եթէ մերժէ զայն, Միացեալ
Նահանգները պիտի դրաւեն Փիլիպպեան կղզ-
ղեխումը եւ պիտի ազատին քսան միլիոն
տոլար տուգանք վճարելէ, որու վերաբերեալ
առաջարկն ընդունուած է Ամերիկեան Ազ-
գային ժողովէն եւ վաւերացուած Մաքսիլի
Նախագահէն :

Հոլանդիա . Նորընտիր վարչապետ Մ. տը
Ցելի աշխարհավարութեան յայտարարութե-
անէն կը տեսնուի թէ նա ջերմ պաշտպան է
Երկուութեան (այսինքն, Վիէնայի եւ Պու-
տափէլթի ուրոյն խորհրդարաններուն պահ-
պանման) եւ Երբեակ Զինակցութեան : Ան-
կեղծ Ազատական է եւ իր տեսչն է քաղա-
քական, կրթական եւ անտեսական յառաջ-
դիմութեամբ ամրապնդուած եւ նպատա-
ւորուած տեսնել Հունգարական աղբը : Զին-
ուորական ոյժով Հունգարիա պարտի, կ'ըսէ,
զոյզ ընթանալ իր մրցակիցներուն հետ : Ասով
կ'ակնարկուի բանակին ընդարձակումը, որ
աչնան մէջ խորհրդարանէն պիտի խնդրուի,
կը կարծուի : Նոր վարչապետը ջերմ ընդու-
նելութիւն մը գտաւ թէ իր կուսակիցներէն
եւ թէ՛ Ընդդիմադիրներէն : Ա. փոսեի կոմիտի
առաջնորդութեամբ կազմուած աղբային կու-
սակցութիւնը լուծուեցաւ եւ անդամներէն
22ը, ընդ որս կուսակցապետ Ա. փոսեի եւ իր
երկրորդն Մ. Հորանցըի որ Պառն Պանֆիլի
հետ մենամարտեցաւ, միացան կառավարական
կուսակցութեան հետ Երեւակ. ժողովին ատե-
նապետ կարգուեցաւ Մ. Փէրցէլ : Կը կարծուի
թէ այս ընտրութիւնը նշան է թէ նախա-

րարութիւնը մտադիր է ժողովին կանոնա-
դիրը բարեփոխել որպէս զի ապագային մէջ
անկարելիութեան մասնուի խափանարար
դրութեան կրկնումը : Պառն Պանֆիլի ար-
քունեաց հրամանատար կարգուեցաւ :

Պապին Երեւակոտութիւնը . Պապը, որ անցեալ
չարթու իր 90րդ տարին թեւակալուեց եւ
Փետր. 20ին 21րդ տարին լրացուց իրեւ քա-
հանայապետ կաթողիկ եկեղեցւոյն, վերաբու-
ժական ծանր գործողութիւն մը կրեց յա-
ջողութեամբ : Իր կուշտին վրայ գտնուած
հին ուսոյց մը բորբոքեցաւ եւ պիտի վա-
սեր մարմինն ընդհանուր առողջութեան :
Բժիշկները որոշեցին թէ հարկ է հանել զայն :
Ն. Սրբութիւնը լաւ դիմացաւ գործողու-
թեան եւ առանց թմրեցուցիչ դեղի, թէեւ
ցաւն անզգալի ընելու համար հեղուկ թմրե-
ցուցիչ մը գործածուեցաւ ուսոյցին տեղը :
Գործողութիւնը 12 վայրկեան տեւեց, եւ
երբ այս ցնցման հետեւող նուազումը եւ
արեան կորուստը դադարեցաւ, մարմինն տեսչն
իջաւ եւ Պապն հանգստացաւ : Գործողու-
թեանէն անմիջապէս առաջ Բժիշկներուն ըսաւ,
«Ինձի պէս ձերուսի մը վրայ գործողու-
թիւն կատարելու համար մեծ քաջասրտու-
թիւն պէտք է ունենաք :» Աւստրիոյ Կայսրը,
Սպանիոյ խնամակալ Թագուհին եւ բազմա-
թիւ ուրիշ նշանաւոր անձնաւորութիւններ
Պապին վիճակին վրայ տեղեկութիւն խնդ-
րեցին եւ կարեկցութիւն յայտնեցին հեռա-
գրով : Գործողութեան յաջորդող չորրորդ օրը
Պապը վստահեց զերծ հոշակուեցաւ եւ բժշ-
կական տեղեկագիրներու հրատարակումը
դադարեցաւ : Կիրակի Ն. Սրբութիւնը քանի
մը ժամ անցուց անկողնէ դուրս :

Ֆրանսա . Մ. Տէրուլէտի եւ անոր հետ ձեր-
բակալուած միւս անձերուն քննութիւնը
կը շարունակէ, եւ հաստատուած կը թուի
թէ Մ. Տէրուլէտ անկախաբար գործեց եւ
ոչ թէ ունէ արքայականի հետ համախոհու-
թեամբ : Կառավարութիւնը կորովի ընթացք
մը բռնեց : Շատ մը տուներ խուզարկուե-
ցան ոստիկանութենէն եւ շատ մը թուղ-
թեր գրաւուեցան քննութեան համար, թէեւ
կը կարծուի որ կարեւոր բան պիտի չգտնուի
անոնց մէջ : Ասոր համար գանդաւներ երեւ-
ցան քանի մը թերթերու մէջ, եւ Մ. Տիւ-
րիւի հարցման մը պատասխանելով ըսաւ թէ,
որովհետեւ Մ. Տէրուլէտի ընթացքին պատ-
ճառով կառավարութեան անհրաժեշտ եղաւ
քննել ապօրինի արարքներն Հայրենասէրնե-
րու Դաշնակցութեան որու կը պատկանէր
Տէրուլէտ, կառավարութիւնը որոշած է նոյն
ընթացքը բռնել հանգէպ բոլոր այն դաշ-
նակցութիւններուն որոնք պաշտօնապէս չեն
ձանչցուած : Ինք առաջադրած է անոնց ապօ-
րինաւորութիւնն երեւան հանել որպէս զի
ջնջէ գանդնը : Այս նպատակով կը կատարուին
խուզարկութիւնները : Ըստ Ֆիլիքսի, ընդ-
հանուր գառախազն համոզուած է թէ իա-
վանուեցաւ արքայականներու յոյժ վտան-
գաւոր դաւաճանութիւն մը, թէեւ Օր-
լէանի դքսին Փարիզաբնակ ներկայացուցիչն
Մ. Պիւլիէ կը յայտարարէ թէ ունէ դաւ
չէ նիւթուած : Ֆիլիքս կ'ըսէ թէ Մ. Պիւլիէի
տան մէջ գտնուած է արքայական կառա-
վարութեան ապագայ կազմաւորման վերա-
բերեալ յայտագիր մը, մանաւանդ ապագայ
պաշտօնականներու ցուցակ մը : Երեւակոյտը 131ի
դէմ 138 քուէով ընդունեցաւ այն առաջարկը,
որով կ'ուզուի Տրէյֆիւսի դատին խնդիրն
յանձնել վերաքննիչ համազուտար ատեանին :
Մերժուեցաւ բարեփոխում մը որով կ'ուզուէր
որ ատեանը ոչ միայն վճիռ արձակէ վերա-

դատման խնդրոյն վրայ, այլ եւ ինք կատարէ
վերաքննութիւնը : Մերժուեցաւ նաեւ ու-
րիշ բարեփոխում մը, որով կ'ուզուէր թոյլ
չտալ որ Եղեռնագատ ճիւղին դատաւորները
մասնակցին որոշման : Վիճաբանութեան ըն-
թացքին մէջ Մ. Պէրանտէ քննադատեց զՄ.
Պոռլիէն : Քիչ մնաց որ գործը մենամարտի
յանցէր : Մ. Պէրանտէ ըսաւ, «Կամաւոր
լրտես մը, իր պաշտօնին բերմամբ դատա-
ւորներու մէջտեղ գտնուելով, իր գաղտ
խուզարկութիւններն ընդ երկար յառաջ վա-
րեց իր պաշտօնակիցներուն բնական վստա-
հութենէն օգտուելով, եւ ապա յանկարծ
եկաւ մամուլի մտնուելու իր այն մատնու-
թեան ընդդէմ իր պաշտօնակիցներուն :» Այս
չտաւ զայրացուց զՄ. Պոռլիէն, եւ որով-
հետեւ իրեն ներելի չէ Երեւակոտական մը
քննադատել մամուլի մէջ՝ մենամարտի հրա-
ւէր զրկեց անոր : Խմբագիրը վստահացուց
թէ Մ. Պոռլիէն ունէ վճարում ընդունած չէ,
ուստի Մ. Պէրանտէ «տալ» բառը դրաւ փո-
խան «վաճառել» բառին եւ չուզեց ուրիշ ունէ
գոհացում տալ : Տրէյֆիւսի դատին համար առ-
նուած բոլոր վկայութիւնները երկու ատուար
հատորով տպագրուեցան ընդ ամենայն 36 օ-
րինակ, եւ բաժնուեցան Վճարակ ատեանի ան-
դամներուն : — Մ. Պալիէն Ֆրանսական Մե-
րակոյտին նախագահ ընտրուեցաւ Կ. պոլսոյ
Ֆրանսական դեսպանին տրուած 83 քուէին
դէմ 131 քուէով : Մ. Փայլիէն 1883ին քանի
մը ամիս վարչապետութիւն ըրաւ, եւ սախար
վարած է նախարարական պաշտօններ :

Այլուայլ . Գերմանիոյ կառավարութիւնը Փի-
լիպպեանց մէջ գտնուած Գերման հպատակ-
ներու կեանքն ու ինչքը Ամերիկեան բա-
նակին պաշտպանութեան տակ դբաւ, որ-
պէս զի Գերման մարտանաւեր ազատ ըլլան
Փիլիպպեաներէն մեկնելու եւ Չինու ծո-
վեղերն երթալու : Գալով Սամոայի, ուր
Գերմանիոյ, Անգլիոյ, եւ Միացեալ Նա-
հանգներու երբեակ տիրապետութիւնն յաջող
չհանդիսացաւ, Գերմանիա կ'առաջարկէ կղզ-
ղեխումը բաժնել յիշեալ երեք պետութիւն-
ներուն միջեւ : Անգլիա-գերմանական համա-
ձայնութեան նկատմամբ Գերմանիոյ Ար-
տաքին գործերու նախարարը Ռայխսթակին
ըսաւ թէ չկրնար աւելի տեղեկութիւն տալ,
բացի ըսելէ թէ այժմու խնդիրներու չվերա-
բերիլ այն, այլ ապագայ պատահականու-
թիւններու : — Փիլիպպեանց մէջ վերջին
քանի մը օրերու միջոցին շատ քիչ կիւ-
տեղի ունեցաւ : Սպայ մը որ զինադուրի դրօ-
շով այցելեց Ամերիկեան բանակեաղը՝ ըսաւ
թէ իր զինուորները, թուով լման 8,000,
ըստ բաւականին կուտած ըլլալով կը բազման
անձնատուր ըլլալ Ամերիկացիներուն : Սլալ
է զրոյցը թէ օտար զինուորներ յոտմաք ելած
են ի Մանիլա : Տեղաբնակ քանի մը օտարազ-
դիներ օգնութիւն խնդրեցին իրենց նաւե-
րէն, բայց ծովակալ Տիւրի զրացուց թէ զօրք
ցամաք հանելը թշնամական արարք պիտի
համարուի : — Պայթում մը տեղի ունեցաւ
Թուրնէ չորս հազարամիթր հեռու գտնուող
վառօղարանին մէջ, ուր կը պահուի Միլիարկ-
րականի Ֆրանսական նաւաբաժնին ոսղմա-
միթրքը : Եւ այս արկածէն 70 մարդ մեռան
եւ 110 մարդ վիրաւորուեցան : Վառօղարա-
նին շուրջ մինչեւ 2 հազարամիթր հեռու
ամէն բան կործանեցաւ : — Զարին ապառոզ-
ջութեան վերաբերեալ զրոյց մը կը հերքուի
այնպիսիներու կողմէ որոնք ամենէն աւելի
չտա կը տեսնեն Ն. Կ. Վեհափառութիւնը :
Ասոնք կ'ըսեն թէ Զարը կատարելապէս ա-
ռողջ է եւ շատ դբաղեալ հանրային գործե-
րով : — Պիւլիէի թագուհին ծանր հիւանդ է :

ԳՐԱՄԱԿԱՆ			
Գոնողիտէ			25 22
Բուժելի	Երկաթուղի		121 32
	ԳՐԱՄ. ՕՍԲ. ՈՍԿԻՆ 100Է		
Մէքիտի	108 3	Նարոլէոն	87 21
Մէթալիք	95 3	Գրեմից	51 8
Մանր արծաթ	102	Անգլ. ոսկի	110 3
Ռուսիոյ բժշ.	90 15	Մանէթ թղթ.	8 54

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՅԱՅԱՆ
Ֆինանսներու Եւրոպ. Ամերիկեան Խաւն

